



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ



ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՂՄԻՅ՝ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ՝
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ**

**ԵՐԵՎԱՆ
2009**

Այս գրքույկում ներկայացված է Երեւանի մամուլի ակումբի «Հայաստանի ՁԼՄ-ներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների լուսաբանման բարելավում» ծրագրի շրջանակներում ԵՄԱ հետազոտության արդյունքները: Ծրագիրն իրականացվել է 2008-ի սեպտեմբերից 2009-ի մարտ ամիսներին: Այն ներառել է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանում Հայաստանի հեռուստաալիքների կողմից արդիական խնդիրների լուսաբանման դիտարկումը, հեռուստալսարանի հարցումներ Երեւանում, Գյումրիում, Վանաձորում եւ Կապանում, Հայաստանի մարզերի խնդիրների մասին բանավեճային հաղորդումների թողարկումներ, ինչպես նաեւ՝ հետազոտության արդյունքների քննարկումներ լրագրողական շրջանակներում:

Սույն ծրագիրն իրականացվել է Երեւանում Մեծ Բրիտանիայի դեսպանության աջակցությամբ: Հետազոտությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել Մեծ Բրիտանիայի դեսպանության տեսակետների հետ:

Ծրագրի տնօրեն՝ Բորիս Նավասարդյան
Դիտարկման համակարգող՝ Էլինա Պողոսբեկյան
Սոցհարցման համակարգող՝ Վիկտորիա Տեր-Սարգիսովա
Շապիկի ձեւավորում եւ էջադրում՝ Նարա Մենդեյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեւանի մամուլի ակումբի հաշվետվությունը.

«Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ Հայաստանի հեռուստաընկերությունների կողմից արդիական խնդիրների լուսաբանման դիտարկում՝ լսարանի տեղեկատվական պահանջարկի հետազոտության համատեքստում»
(2008թ. սեպտեմբեր-հոկտեմբեր)

Ընդհանուր տեղեկություններ դիտարկման մասին	4
Հետազոտված ՉԼՄ-ների ցանկը եւ համառոտ բնութագիրը	6
Դիտարկման հիմնական արդյունքները	9
Հեռարձակվող ՉԼՄ-ների լսարանի տեղեկատվական պահանջմունքների մասին սոցիոլոգիական հարցման արդյունքները	14
Դիտարկման առանձին արդյունքներն՝ ըստ ՉԼՄ-ների եւ ընդհանուր հետեւություններ հետազոտությունից	29
ՀԱՎԵԼՎԱԾ 1 Մեթոդաբանություն	35
ՀԱՎԵԼՎԱԾ 2 Աղյուսակներ	40

**ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ «ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ
ԴԻՏԱՐԿՈՒՄ՝ ԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՅԱՆՋԱՐԿԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»
(ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ 2008)**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

2008-ի սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 31-ը Երեւանի մամուլի ակումբն իրականացրել է Հայաստանի 11 հեռուստաալիքի կողմից տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրությունների լուսաբանման դիտարկում:

Դիտարկման խնդիրն էր բացահայտել Հայաստանի հեռարձակող ՉԼՄ-ների հետաքրքրության աստիճանը՝ ընտրարշավի, ինչպես նաեւ Հայաստանի համայնքների/տարածաշրջանների արդիական խնդիրների նկատմամբ, որոնք, ինչպես ենթադրվում է, պետք է հայտնվեին ՏԻՄ թեկնածուների ուշադրության կենտրոնում:

Դիտարկման առարկան էին լրատվական, լրատվավերլուծական ծրագրերի հիմնական թողարկումները եւ բանավեճային հաղորդումները Հայաստանի 11 հեռուստաալիքներում:

բոլոր 4 համերկային ալիքները՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1), Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2), «ԱԼՄ» եւ «Արմենիա» (*համերկային ասելով հասկացվել են այն հեռուստաալիքները, որոնք հեռարձակվում են երկրի մարզերի ավելի քան կեսում*),

«Շանթ» հեռուստաընկերության մայրաքաղաքային հեռարձակումը. այն այլ տարբերակով հեռարձակվում է Գյումրիում եւ ավանդաբար ուշադիր է Շիրակի մարզի իրադարձությունների նկատմամբ,

6 մարզային հեռուստաալիքներ՝ «Շիրակ» (միակ մարզային հանրային հեռուստաալիքը), «Ցայգ» (28-րդ դեցիմետրային հաճախականությամբ հեռարձակվող տարբերակը), «ԳԱԼԱ» (*երեքն էլ՝ Գյումրիում են, Շիրակի մարզ*), «Լոռի» եւ «ՄԻԳ» (*երկուսն էլ Վանաձորում են, Լոռու մարզ*), «Սոսի» (*Կապան, Սյունիքի մարզ*):

Դիտարկման մեթոդաբանությունը նախատեսում էր սահմանել այն 13 թեմաներին՝ հետազոտվող հեռուստաալիքների անդրադարձի հաճախականությունը, որոնք առաջնային են համարվել ԵՄԱ փորձագետների կողմից, ինչպես նաեւ այդ թեմաներին հատկացված եթերային ժամանակի հաշվառումը: Դիտարկողները սահմանում էին նաեւ հիշատակումների քնույթը՝ զուտ տեղեկատվական, գովասանական եւ պրոբլեմատիկ-քննադատական:

Դիտարկման առարկա էին հետեւյալ թեմատիկ բաժինները.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր. ինքնուրույնություն, բյուջետային հնարավորություններ, աշխատանքի թափանցիկություն, հաշվետվողականություն (Երեւանի դեպքում՝ կարգավիճակի, ուղղակի կամ միջնորդավորված ընտրությունների հարցեր) եւ այլն,

2. ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը,
3. Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը,
4. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը,
5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով (ներդրումների ներգրավում, տարածաշրջանային զարգացման ծրագրերի ստեղծում/ընդգրկում եւ այլն),
6. Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում,
7. Համայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում,
8. Համայնքում/տարածաշրջանում բնակարաններով ապահովում եւ այլ սոցիալական խնդիրների լուծում,
9. Համայնքում/տարածաշրջանում բարենորոգումների (ճանապարհներ, կոմունալ տնտեսություն, շինարարության որակ, հասարակական վայրերի մաքրություն եւ բարեկարգվածություն եւ այլն) խնդիրը,
10. Համայնքում/տարածաշրջանում շրջակա միջավայրի պահպանության հարցերը: Համայնքում/տարածաշրջանում կանաչ տարածքների եւ ջրամբարների պահպանումն ու զարգացումը,
11. Համայնքում/տարածաշրջանում հողօգտագործման եւ ջրօգտագործման հարցերը: Համայնքում/տարածաշրջանում շինարարության համար հողհատկացումները (հողի տնօրինման թափանցիկությունը, հասարակ քաղաքացիների համար մատչելիությունը, քաղաքաշինության նորմերին համապատասխանությունը, իրավական ընթացակարգերի պահպանումը եւ բյուրոկրատացման մակարդակը),
12. Համայնքում/տարածաշրջանում տրանսպորտի իրավիճակը,
13. Համայնքում/տարածաշրջանում սոցիալական ենթակառուցվածքների (զբոսայգիներ, մարզական եւ մանկական խաղահրապարակներ, բակեր եւ այլն) զարգացումը:

(Դիտարկման անցկացման մեթոդաբանության մասին ավելի մանրամասն տես Հավելված 1-ում՝ «Մեթոդաբանություն»:)

ՉՈՒԳԱՅԵՌԱԲԱՐ ԵՄԱ-ն **սոցիոլոգիական հարցում** է անցկացրել այն նույն քաղաքներում, որտեղ հեռարձակվում են հետազոտված հեռուստաընկերությունները (Երեւան, Գյումրի, Վանաձոր, Կապան): Հարցման նպատակն էր բացահայտել դիտարկման վերոհիշյալ թեմատիկ բաժինների նկատմամբ հարցվողների հետաքրքրությունը եւ նրանց վերաբերմունքը հետազոտվող հեռուստաալիքների նկատմամբ՝ ՏԻՄ ընտրությունների համատեքստում: Այդ հետազոտությունը՝ հեռուստաալիքների դիտարկման արդյունքների հետ համադրությամբ, թույլ է տալիս սահմանել, թե որքանով էին հեռարձակող ՉԼՄ-ները բավարարում լսարանի տեղեկատվական պահանջմունքները՝ կապված ընտրական գործընթացի հետ:

Միաժամանակ, հեռուստաալիքների դիտարկումը եւ սոցիոլոգիական հարցումը դարձան ԵՄԱ տվյալ ծրագրի մի մասը, որը նախատեսում էր նաեւ 12 **բանավեճային հեռուստահաղորդման** թողարկում՝ սկիզբից Հայաստանի մարզերի արդիական խնդիրներին եւ դրանց արտացոլմանը ՏԻՄ ընտրարշավում:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՉԼՍ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ՀՀՀ Առաջին ալիք, Հ1) - հանդիսանում է Հանրային հեռուստառադիոընկերության մի մասը: Հիմնադրվել է 2001 թվականին: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Առաջին ալիքի օրական հեռարձակման տեւողությունը՝ 19,5 ժամ մարզերում եւ 24 ժամ՝ Երեւանում: Հետազոտման առարկա են դարձել Հ1-ի հիմնական լրատվական ծրագիրը՝ **«Հայլուրը»**, եւ **«Կիրակնօրյա Հայլուր»** լրատվալեւոճական ծրագիրը, բանավեճային **«25 րոպե»** եւ **«Բանաձեւ»** հաղորդումները: «Հայլուրը» եթեր էր հեռարձակվում շաբաթը 6 անգամ՝ երկուշաբթիից շաբաթ (դիտարկման առարկան «Հայլուրի» հիմնական թողարկումներն էին ժամը 21-ին, բացառությամբ սեպտեմբերի 6-ից, երբ հիմնական թողարկումը եթեր հեռարձակվեց ժամը 20.30), «Կիրակնօրյա Հայլուրը»՝ շաբաթը մեկ անգամ՝ կիրակի օրերին, ժամը 21.00, «25 րոպե» եթեր էր դուրս գալիս շաբաթը 4 անգամ՝ երկուշաբթիից հինգշաբթի, 20.20: Հետազոտության ժամանակաշրջանում «Բանաձեւի» միայն մեկ թողարկում է եղել՝ սեպտեմբերի 25-ին, ժամը 22.30: Դիտարկման ամբողջ ժամանակամիջոցում հետազոտվել է Հ1-ի 1212 հեռուստանյութ: Դրանցից 121-ը նվիրված էր դիտարկման թեմային:

«ԱԼՄ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2000-ին: Հիմնադիր՝ «ԱԼՄ Հոլդինգ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ: Հետազոտության առարկա են դարձել **«Օրեցօր»** հիմնական լրատվական ծրագիրը, **«Հարցի արժեքը»**, **«Դիրքորոշում»**, **«Իրականում»** (ռուսալեզու) բանավեճային հաղորդումները: «Օրեցօր»-ը եթեր էր դուրս գալիս ամեն օր (դիտարկման առարկա են դարձել «Օրեցօր»-ի հիմնական թողարկումները ժամը 20.00-ին): «Հարցի արժեքը» եւ «Դիրքորոշումը» եթեր էին դուրս գալիս շաբաթը 1 անգամ՝ ժամը 21.20, երեքշաբթի եւ հինգշաբթի՝ համապատասխանաբար, «Իրականում»-ը՝ շաբաթ օրերին, 21.30: Դիտարկման ամբողջ ժամանակամիջոցում հետազոտվել է «ԱԼՄ»-ի 846 հեռուստանյութ: Դրանցից 83-ը նվիրված էր դիտարկման թեմային:

«ԱՐՄԵՆԻԱ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998-ին: Հիմնադիր՝ «Արմենիա TV» ՓԲԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ: Հետազոտության առարկա է դարձել **«Ժամը»** հիմնական լրատվական ծրագիրը: «Ժամը» եթեր էր հեռարձակվում շաբաթը 6 անգամ՝ երկուշաբթիից ուրբաթ (դիտարկման առարկա են դարձել «Ժամի» հիմնական թողարկումները՝ ժամը 19.30-ին): Դիտարկման ամբողջ ժամանակամիջոցում հետազոտվել է 745 հեռուստանյութ: Դրանցից 62-ը նվիրված էր դիտարկման թեմային:

ՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԿԻԷ (Հ2) - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998-ին: Հիմնադիր՝ «Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 18 ժամ: Հետազոտության առարկա են դարձել Երկրորդ ալիքի հիմնական լրատվական ծրագիրը՝ **«Լրաբերը»**, եւ **«Զորորոդ ստուդիա»** բանավեճային հաղորդումը: «Լրաբերը» եթեր էր հեռարձակվում շաբաթը 6 անգամ՝ երկուշաբթիից շաբաթ (դիտարկման առարկա են դարձել «Լրաբերի» հիմնական թողարկումները ժամը 23.00, բացի սեպտեմբերի 8-ից՝ ժամը 20.00): «Զորորոդ ստուդիան» եթեր էր դուրս գալիս շաբաթը 5 անգամ՝ երկուշաբթիից ուրբաթ՝ 20.30: Դիտարկման ամբողջ ժամանակաշրջանում հետազոտվել է Հ2-ի 1230 հեռուստանյութ, որից 67-ը նվիրված էր դիտարկման թեմային:

«ՇԱՆԹ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1994-ին: Հիմնադիր՝ «Շանթ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ: Հետազոտության առարկա են դար-

ծել «**Յորիգոն**» հիմնական լրատվական եւ «**Յորիգոնի հավելված**» լրատվավերլուծական ծրագրերը, «**Յեռանկար**» բանավեճային հաղորդումը: «Յորիգոնը» եթեր էր դուրս գալիս շաբաթը 6 անգամ՝ երկուշաբթիից շաբաթ (դիտարկման առարկա են դարձել «Յորիգոնի» հիմնական թողարկումները՝ ժամը 22.00), «Յորիգոնի հավելվածը»՝ շաբաթը 5 անգամ՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 22.30: «Յեռանկարը» հեռարձակվում էր շաբաթը 5 օր՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 22.35, իսկ սեպտեմբերի 22-ից՝ 23.15: Դիտարկման ամբողջ ժամանակամիջոցում հետազոտվել է «Շանթի» 738 հեռուստանյութ, որից 62-ը նվիրված էր դիտարկման թեմային:

«**ՇԻՐԱԿ**» - հանրային հեռուստաալիք: Յիմնադրվել է 2001-ին: Դեկավար մարմինը՝ Յանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 8 ժամ: Յետազոտության առարկա են դարձել «**Փակագիծ**», «**Դիրքորոշում**», «**Ստորակետ**», «**Գենդերը եւ ՏԻՄ ընտրությունները**» բանավեճային հաղորդումները: «Փակագիծը» եթեր էր հեռարձակվում շաբաթը մեկ անգամ՝ ուրբաթ, ժամը 20.00: «Դիրքորոշումը», «Ստորակետը», եւ «Գենդերն ու ՏԻՄ ընտրությունները»՝ երեքշաբթի օրերը, ժամը 19.30: Դիտարկման ամբողջ ժամանակամիջոցում հետազոտվել է «Շիրակի» 22 հեռուստանյութ: Դրանցից 19-ը նվիրված էր դիտարկման թեմային:

«**ԳԱԼԱ**» - մասնավոր հեռուստաընկերություն: Յիմնադրվել է 2005-ին: Յիմնադիր՝ «ԶԱՊ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 13-17 ժամ: Յետազոտության առարկա են դարձել «**ԳԱԼԱ Նյուս**» հիմնական լրատվական եւ «**Շաբաթն անց**» լրատվավերլուծական ծրագրերը, «**ԳԱԼԱ Նյուսի հավելված**» բանավեճային հաղորդումը: «ԳԱԼԱ Նյուս»-ը եթեր էր դուրս գալիս շաբաթը 6 անգամ՝ երկուշաբթիից շաբաթ (դիտարկման առարկա են դարձել «ԳԱԼԱ Նյուս»-ի հիմնական թողարկումները ժամը 22.00): «Շաբաթն անց»-ը հեռարձակվում էր շաբաթը մեկ անգամ՝ կիրակի, ժամը 21.00: «ԳԱԼԱ Նյուսի» հավելվածը՝ եթերում էր լինում շաբաթը 4 անգամ՝ երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժամը 20.30: Դիտարկման ամբողջ ժամանակամիջոցում հետազոտվել է «ԳԱԼԱ»-ի 1173 հեռուստանյութ, որից 222-ը վերաբերվել են դիտարկման թեմային:

«**ՅԱՅԳ**» - մասնավոր հեռուստաընկերություն: Յիմնադրվել է 1991-ին: Յիմնադիր՝ «Յայգ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 18 ժամ: Յետազոտության առարկա է դարձել «**Ազդարար**» հիմնական լրատվական ծրագիրը: «Ազդարարը» եթեր էր հեռարձակվում շաբաթը 6 անգամ՝ երկուշաբթիից շաբաթ (դիտարկման առարկա են դարձել «Ազդարարի» հիմնական թողարկումները՝ ժամը 22.00): Դիտարկման ամբողջ ժամանակամիջոցում հետազոտվել է «Յայգի» 1155 հեռուստանյութ: Դրանցից 169-ը նվիրված էին դիտարկման թեմային:

«**ԼՈՌԻ**» - մասնավոր հեռուստաընկերություն: Յիմնադրվել է 1995-ին: Յիմնադիր՝ «Լորի TV» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 13-14 ժամ: Յետազոտության առարկա են դարձել «**Մունետիկ**» հիմնական լրատվական եւ «**Անդրադարձ**» լրատվավերլուծական ծրագրերը, «**Տեսակետ**» եւ «**Ինքնակառավարում**» բանավեճային հաղորդումները: «Մունետիկը» եթեր էր դուրս գալիս շաբաթը 5 անգամ՝ երկուշաբթիից ուրբաթ (դիտարկման առարկա են դարձել «Մունետիկի» հիմնական թողարկումները՝ ժամը 20.30): «Անդրադարձը» հեռարձակվում էր շաբաթը մեկ անգամ՝ երեքշաբթի, ժամը 21.00, «Ինքնակառավարումը»՝ շաբաթը 2 անգամ՝ հինգշաբթի եւ ուրբաթ, ժամը 21.00: Դիտարկման ամբողջ ժամանակամիջոցում հետազոտվել է «Լորի» 173 հեռուստանյութ: Դրանցից 78-ը նվիրված էր դիտարկման թեմային:

«**ՄԻԳ**» - մասնավոր հեռուստաընկերություն: Յիմնադրվել է 2000-ին: Յիմնադիր՝ «Լոռու ՄԻԳ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 16-18 ժամ: Յետազոտության առարկա են դարձել «**Լուրեր**» հիմնական լրատվական ծրագիրը, «**Վանաձորն այսօր**» եւ «**Ստուդիա 2**»/«**Տեղական թեմա**» բանավեճային հաղորդումները: «Լուրերը» հեռարձակվում էր շաբաթը 5 անգամ՝ երկուշաբթիից ուրբաթ (դիտարկման առարկա են դարձել «Լուրերի» հիմնական թողարկումները՝ 20.40): «Վանաձորն այսօր» եթեր էր դուրս գալիս ամիսը մեկ անգամ՝ չորեքշաբթի՝ 19.00, «Ստուդիա 2»/«Տեղական թեմա»-ն՝ ամիսը մեկ անգամ՝ ուրբաթ, ժամը 19.00: Դիտարկման ամբողջ ժամանակամիջոցում հետազոտվել է «ՄԻԳ»-ի 165 հեռուստանյութ: Դրանցից 65-ը նվիրված էր դիտարկման թեմային:

«ՍՈՍԻ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2000-ին: Հիմնադիր՝ «Ձագե-
ծոր» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 14-16 ժամ: Հետազոտության առարկա
են դարձել «Լուրեր» հիմնական լրատվական եւ «Անցած շաբաթ» լրատվալերլուծական
ծրագրերը: «Լուրերը» եթեր է դուրս եկել շաբաթը 5 անգամ՝ երկուշաբթից ուրբաթ (դի-
տարկման առարկա են դարձել «Լուրերի» հիմնական թողարկումները՝ ժամը 20.30): «Անցած
շաբաթը» հեռարձակվում էր շաբաթը 1 անգամ՝ կիրակի, 20.30: Դիտարկման ամբողջ ժամա-
նակամիջոցում հետազոտվել է 372 հեռուստանյութ: Դրանցից 171-ը նվիրված է եղել դի-
տարկման թեմային:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Եթե որպես ելակետ ընդունենք դիտարկման թեմային նվիրված հեռուստանյութերի թվի եւ հետազոտված նյութերի ընդհանուր քանակի հարաբերակցությունը, ապա դիտարկման թեմային ամենից շատ ուշադրություն է հատկացրել «Սոսին» (46%), նրան հաջորդում են «Լոռի» (45.1%), «ՄԻԳ»-ը (39.4%), «ԳԱԼԱ»-ն (18.9%) եւ «Ցայգը» (14.6%): Այստեղ հաշվի չի առնվում «Շիրակ» հեռուստաալիքի ցուցանիշը (86.4%), քանի որ նրա եթերում չկան լրատվական ծրագրեր, իսկ բանավեճային հաղորդումների գրեթե բոլոր թողարկումները (21-ից 18-ը), որ հեռարձակվել են դիտարկման ժամանակամիջոցում, նպատակային կերպով նվիրված էին ՏԻՄ ընտրություններին, եւ դրանց համադրությունը այլ թեմաների լուսաբանման հետ օրինաչափ համարել չի կարելի: Համերկրային եւ մայրաքաղաքային ալիքներն այդ ցուցանիշով պակաս ակտիվ գտնվեցին՝ դիտարկման թեմային նվիրելով հետազոտված նյութերի ընդհանուր քանակի 5-10 տոկոսը:

Ընդհանուր առմամբ, արձանագրվել է օրինաչափություն. որքան փոքր է (բնակչության թվով) հետազոտված ՉԼՄ-ների հեռարձակման շառավիղը, այնքան շատ են նրանք ուշադրություն դարձնում տեղական խնդիրներին, այդ թվում՝ ընտրությունների հետ կապված: Ընդ որում, սույն օրինաչափությունը հաստատվում է ե՛լ դիտարկման թեմային անդրադառնալու հարաբերական հաճախականությամբ, ե՛լ թեմային հատկացված եթերային ժամանակով: Այսպես, համերկրային եւ մայրաքաղաքային հեռուստաալիքները դիտարկման թեմային են նվիրել հետազոտված եթերաժամանակի ընդհանուր ծավալի 4-10 %-ը, մինչդեռ Գյումրիի հեռուստաալիքները՝ 30-40%, Վանաձորիսը՝ 50%, Կապանիսը՝ 50%-ից մի փոքր ավելին:

Ընդհանուր առմամբ հետազոտված բոլոր 11 ալիքների կողմից դիտարկման թեմային նվիրված ընդհանուր եթերաժամանակից 5 համերկրային եւ 1 մայրաքաղաքային հեռուստաալիքներին բաժին է ընկել 1/5-րդից մի փոքր պակաս, իսկ մարզային 6 հեռուստաընկերություններին՝ մոտ 4/5-ը: Ընդ որում, համերկրային եւ մայրաքաղաքային հեռուստաալիքների հեռարձակման ամբողջ հետազոտված ծավալը երկու անգամ գերազանցում էր մարզային հեռուստաընկերությունների հետազոտված ծավալը: Համերկրային եւ մայրաքաղաքային հեռուստաալիքներից դիտարկման թեմային ամենաշատ ուշադրություն են հատկացրել (ըստ անդրադառնալու հաճախականության) Հ1-ը եւ «ԱԼՄ»-ն:

Բնական է, որ դիտարկման թեման կոնկրետ հեռուստաընկերությունների առավել ուշադրությանն էր արժանանում այն ժամանակաշրջանում, որն անմիջապես նախորդում էր իրենց քաղաքում ընտրություններին: Հետազոտված ՉԼՄ-ների հեռարձակման գոտում գտնվող մարզերի ոչ մեծ համայնքներում ընտրարշավը նվազ հետաքրքրություն էր առաջացրել: Այսպես, «Լոռի» հեռուստաընկերությունը սեպտեմբերի համեմատ զգալիորեն ակտիվացավ հոկտեմբերին, երբ մարզկենտրոն Վանաձորում քաղաքապետի եւ ավագանու ընտրություններ էին անցկացվում: «Լոռի» հեռուստաընկերության կողմից դիտարկման թեմային նվիրած եթերաժամանակը սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսներին մոտավորապես մեկը հինգի հարաբերությամբ էր: Հոկտեմբերին այդ հեռուստաալիքի եթեր վերադարձավ «Ինքնակառավարում» հաղորդաշարը: Հոկտեմբերին զգալիորեն աճեց հետաքրքրությունը դիտարկման թեմայի նկատմամբ «Շանթ» մայրաքաղաքային ալիքում, ինչը նույնպես պայմանավորված էր քաղաքապետի ընտրություններով Գյումրիում, որին «Շանթն» ավանդաբար մեծ ուշադրություն է հատկացնում: Սեպտեմբերի համեմատ հոկտեմբերին այդ ալիքը դիտարկման թեմային է նվիրել ավելի քան երեք անգամ շատ եթերաժամանակ:

Ընտրական գործընթացների ժամանակ ՉԼՄ-ների ակտիվության վրա ազդող լրացուցիչ գործոն է վերջերս դարձել միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից դրամաշնորհների հատկացումները՝ ընտրություններին նվիրված հեռուստահաղորդումներ թողարկելու համար: Այդ իմաստով հատկանշական է Գյումրիի «Շիրակ» հանրային հեռուստաընկերության օրինակը: Նրա եթերում հայտնված «Գենդերը եւ ՏԻՄ ընտրությունները» հաղորդաշարը, որին աջակցում էր ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը (Հայաստան), եւ որը հատուկ նվիրված էր տվյալ ընտրություններին, նշանակալիորեն ազդեց այդ ալիքի՝ դիտարկման թեմայի նկատմամբ հետաքրքրության վրա: «Շիրակի» 18 բանավեճային հաղորդումից 10-ը, որ նվիրված էին ՏԻՄ ընտրություններին, եթեր դուրս եկան հենց այդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Թեմատիկ բաժինները, որոնց շուրջ էր կենտրոնացած դիտարկումը, կարելի է պայմանակալորեն բաժանել երկու կատեգորիայի՝ **ընդհանուր**, այսինքն՝ կապված անմիջապես ընտրությունների կազմակերպման եւ անցկացման հետ, դրանց քաղաքական-իրավական բաղադրիչի հետ, եւ **մասնավոր**, այսինքն՝ Հայաստանի մարզերի համար առավել կարեւոր ոլորտներում իրավիճակը բնութագրող: Վերոհիշյալ բաժիններից «ընդհանուր» կատեգորիային են վերաբերում 1-ինից 4-րդ, իսկ «մասնավոր» կատեգորիային՝ 5-րդից 13-րդ բաժինները: Ընդհանուր թեմաների նկատմամբ հետաքրքրությունը, որպես կանոն, աճում էր, երբ մոտենում էին խոշոր քաղաքներում (Գյումրի, Վանաձոր) հոկտեմբերին նախատեսված ընտրությունները: Եթե սեպտեմբերին ընդհանուր թեմաներին անդրադարձը 11 հեռուստաալիքներում կազմել է դիտարկման թեմային նվիրված նյութերի ընդհանուր ծավալի 36.8%-ը (այդ թվում՝ 17.1% համերկային եւ մայրաքաղաքային ալիքներում եւ 43.4%՝ մարզայիններում), ապա երկու ամսվա արդյունքում 11 հեռուստաալիքներում ընդհանուր թեմաներին բաժին է ընկել դիտարկման թեմային նվիրված լուսաբանման ամբողջ ծավալի կեսից ավելին՝ 270,523.2 վայրկյանից 148,988.7-ը (55.1%), այդ թվում՝ համերկային եւ մայրաքաղաքային հեռուստաալիքներում՝ 56,161.9 վայրկյանից 15,371.3-ը (27.4%), իսկ մարզայիններում՝ 214,361.3 վայրկյանից 133,617.4-ը (62.3%):

Հետագուոված բոլոր 11 ալիքներում դիտարկման առարկա թեմատիկ բաժիններից է՛լ քանակով, ե՛լ ծավալով ամենաշատը լուսաբանվել է **«Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը»**: Այս թեմային նախապատվությունն առավել ցցուն կերպով երեւում էր հոկտեմբերին, երբ ընտրություններ էին ընթանում Գյումրիում եւ Վանաձորում: Երկու ամսվա ընթացքում այդ թեմատիկ բաժինն հատկացվել է դիտարկման թեմային նվիրված ամբողջ եթերային ժամանակի 39.3%-ը: Հենց դիտարկման երկրորդ ամսում ընտրությունների ընթացքի եւ ընտրական օրենսդրության նկատմամբ հետաքրքրության աճի շնորհիվ էր, որ չորս ընդհանուր թեմատիկ բաժինները նշանակալիորեն գերազանցեցին մասնավոր թեմատիկ բաժիններին (համապատասխանաբար 148,988.7 եւ 121,534.5 վայրկյան): Հենց միայն «...ընտրությունների գործընթացը» բաժինը սեպտեմբեր-հոկտեմբերին արժանացել է այնպիսի ուշադրության, որը համարժեք է 9 մասնավոր թեմաներին հատկացրած ուշադրությանն՝ ընդհանուր առմամբ (համապատասխանաբար՝ 106,291.4 եւ 121,534.5 վայրկյան): Այստեղից կարելի է եզրակացնել, որ հեռարձակող ՉԼՄ-ներին ավելի շատ հետաքրքրում էր, թե ՈՎ եւ ԻՆՉՊԵՍ կընտրվի, քան ԻՆԶ, ԻՆՉՊԻՍԻ քայլեր են ընտրողներն ակնկալում թեկնածուներից: Ընտրարշավի կոնկրետ, առարկայական բովանդակության բացակայությունը Հայաստանի ընտրությունների կայուն հատկանիշ է դառնում՝ ինչպես համապետական, այնպես էլ տեղական մակարդակով:

Լուսաբանմամբ երկրորդ տեղում է (մասնավորների մեջ՝ առաջինը) **«Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացումը»** (թեմային անդրադառնալու քանակով եւ ծավալով՝ բոլոր 11 հեռուստաալիքներում): Սեպտեմբերին, անդրադառնալու հաճախականությամբ, այս բաժինը նույնիսկ առաջին տեղում է եղել: Սա, հավանաբար, բացատրվում է միջնակարգ եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա մեկնարկով եւ դրա հետ կապված բազմաթիվ միջոցառումներով: Հոկտեմբերին կրթական թեմաների նկատմամբ ուշադրությունը նվազել է. ընդ որում, ամբողջ բաժինն առաջվա պես ակտիվորեն էր լուսաբանվում: Այլ կերպ ասած, տվյալ թեմայի նկատմամբ ուշադրության աճը եւ անկումը հիմնականում պայմանավորված չէր ընտրար-

շավով, եւ դրա լուսաբանման դիւստրիկան պետք է մեծմասամբ դիտարկել ՏԻՄ ընտրությունների համատեքստից դուրս:

Լուսաբանման ծավալով երրորդ տեղում է հայտնվել **«Տեղական ինքնակառավարման մարմինների եւ ՏԻՄ ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր»** թեմատիկ բաժինը: Ընդ որում, թեմային անդրադառնալու հաճախականությամբ այս բաժինը միայն 7-րդն էր, ինչը բնական է՝ օրենսդրության հարցերի լուսաբանումն առավել հանգամանալից մոտեցում է պահանջում: Միաժամանակ, դժվար է բացատրել այն փաստը, որ այդ թեմատիկ բաժնին շատ ավելի (ըստ ընդհանուր եթերային ժամանակի՝ 20 անգամ ավելի, իսկ անդրադարձի հաճախականությամբ՝ ավելի քան 3 անգամ) ուշադրություն են հատկացրել ոչ թե համերկրային եւ մայրաքաղաքային ալիքները, այլ մարզայինները: Եվ դա՝ չնայած այն հանգամանքին, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, մասնավորապես՝ մայրաքաղաքի, անցնում էին Երեւանի կարգավիճակի փոփոխության օրենսդրական համապատկերում, ինչը նախատեսված է 2005-ի սահմանադրական փոփոխություններով: Ըստ Սահմանադրության եւ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման եւ տարածքային կառավարման մասին» օրինագծի (առաջին ընթերցումն անցել է 2007-ի վերջին եւ վերջնական ընդունվելու էր 2008-ի վերջին), մայրաքաղաքը ձեռք է բերում համայնքի կարգավիճակ՝ ներկայացուցչական իշխանության ընտրովի մարմնով եւ քաղաքապետով: Ներկայում գործող մայրաքաղաքային համայնքները կլուծարվեն: Սակայն այդ արմատական օրենսդրական վերափոխումները հեռարձակող ՉԼՄ-ներում առանձնակի հետաքրքրության չեն արժանացել նույնիսկ այն ժամանակ, երբ վերջին անգամ էին ընտրվում երեւանյան համայնքների ղեկավարներն ու ավագանիները:

Արժե նկատել նաեւ, որ «Տեղական ինքնակառավարման մարմինների եւ ՏԻՄ ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր» թեմատիկ բաժինը երրորդ տեղում է հայտնվել հոկտեմբերի ակտիվ լուսաբանման շնորհիվ. սեպտեմբերին անցկացված դիտարկման արդյունքում եթերային ժամանակով այս բաժինը միայն 7-րդ տեղում էր, իսկ անդրադարձի հաճախականությամբ՝ 8-րդ: Այն բանում, որ սեպտեմբերի համեմատ հոկտեմբերին «...օրենսդրությունը» հինգ անգամ ավելի շատ եթերաժամանակ է ստացել, վճռական դեր է խաղացել «Շիրակ» հեռուստաընկերությունը: Նա է ապահովել դիտարկման երկրորդ ամսում այս բաժնի լուսաբանման ընդհանուր ծավալի 73.4 տոկոսը՝ մարզային հեռուստաընկերությունների մեջ, եւ 71.2 տոկոսը՝ բոլոր հեռուստաընկերությունների մեջ: Միաժամանակ, բոլոր հեռուստաալիքների դիտողներին հետաքրքիր կլինեւր իմանալ թեկնածուների, ինչպէս նաեւ մասնագետների տեսակետները տեղական ինքնակառավարման ոլորտի՝ կառավարության առաջ քաշած մի շարք օրինագծերի շուրջ («Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի նախագիծը) կամ սեպտեմբերի ընթացքում Ազգային ժողովում քննարկվող օրինագծերի շուրջ («Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Համայնքային ծառայության մասին» օրենքներում փոփոխությունների եւ լրացումների փաթեթը): Հայաստանում արդիական է նաեւ փոքրաթիվ գյուղական համայնքների խոշորացման նպատակահարմարության հարցը, բայց դա էլ անտեսվեց հեռուստաալիքներում:

«Համայնքում/տարածաշրջանում բարենորոգումների (ճանապարհներ, կոմունալ տնտեսություն, շինարարության որակ, հասարակական վայրերի մաքրություն եւ բարեկարգվածություն եւ այլն) խնդիրը» թեմատիկ բաժինը, թեեւ լուսաբանման ծավալով չորրորդ տեղում է հայտնվել, անդրադարձի հաճախականությամբ երրորդ տեղում է: Այս թեմայի նկատմամբ ՉԼՄ-ների հետաքրքրությունը կարելի է օրինաչափ համարել, հատկապէս հաշվի առնելով, թե ընտրությունների շրջանում ինչքան են ակտիվանում թեկնածուներն այդ ուղղությամբ՝ ասֆալտապատվում են ճանապարհներ, վերանորոգվում են կոմունալ տնտեսության օբյեկտներ... Թեմայի նկատմամբ լրացուցիչ ուշադրություն էին ապահովում ինչպէս «Լինսի» հիմնադրամի՝ ճանապարհային հաղորդակցության միջոցների վերականգնման ծավալուն ծրագրերը, այնպէս էլ ընտրություններին նախորդող ժամանակաշրջանում շինարարության ծավալների աճն ընդհանրապէս: Այս բաժնի լուսաբանման համարժեքության մասին վկայում է նաեւ այն, որ թեմային նվիրված հիշատակումների կեսից ավելին պրոբլեմատիկ-քննադատական բնույթի էին:

Ընտրությունների համատեքստում ավանդաբար առանձնակի ուշադրության արժանացող մեկ այլ թեմատիկ բաժին՝ **«Համայնքում/տարածաշրջանում բնակարաններով ապահովումը**

Եւ այլ սոցիալական խնդիրների լուծումը», լուսաբանման ծավալով 5-րդ Եւ անդրադարձի (հիշատակումների) հաճախականությամբ չորրորդ տեղում Է հայտնվել: Այս թեմայի լուսաբանման հանրագումարի մոտավորապես կեսը բաժին Է ընկել Գյումրիի երկու հեռուստաընկերությունների («ԳԱԼԱ» Եւ «Ցայգ»), այսինքն՝ այն տարածաշրջանի հեռարձակողներին, որտեղ 1988-ի երկրաշարժի հետեւանքներով պայմանավորված՝ սուր Է բնակարանային ապահովման խնդիրը: Միաժամանակ, պրոբլեմատիկ-քննադատական նյութերի քանակն այստեղ զգալիորեն ավելի փոքր Է, քան «Համայնքում/տարածաշրջանում բարենորոգումների (ճանապարհներ, կոմունալ տնտեսություն, շինարարության որակ, հասարակական վայրերի մաքրություն Եւ բարեկարգվածություն Եւ այլն) խնդիրը» բաժնում: Այս միտումն արտահայտվել Է ինչպես ընդհանուր առմամբ բոլոր հետազոտված ՉԼՄ-ներում, այնպես էլ, Եւ հատկապես, համերկրային Եւ մայրաքաղաքային հեռուստաալիքներում: Վերջիններիս եթերում (բացի «ԱԼՄ»-ից) «Համայնքում/տարածաշրջանում բնակարաններով ապահովումը Եւ այլ սոցիալական խնդիրների լուծումը» թեմայի գովասանական հիշատակումների թիվը նկատելիորեն գերազանցել Է պրոբլեմատիկ-քննադատականին: Համերկրային Եւ մայրաքաղաքային հեռուստաալիքների «լավատեսությունը» կարելի Է բացատրել Երեւանում շինարարության մեծ ծավալով, բնակելի «Էլիտար» շենքերի աճող թվով: Սակայն այդ «Էլիտար» նորակառույցները հազիվ թե լուծած լինեն այն սոցիալական խավերի խնդիրները, որոնք առավել սուր կերպով էին բնակարանների կարիք գում, Եւ հեռուստաեթերը զբաղեցրած որոշակի էյֆորիան հազիվ թե արդարացված լիներ:

Ընդհանուր եթերային ժամանակով 6-րդ Եւ անդրադարձի հաճախականությամբ 5-րդ տեղում Է հայտնվել **«Համայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում»** թեմատիկ բաժինը: Թեմայի լուսաբանման գլխավոր առանձնահատկություններից էր գովասանական նյութերի գերակայությունը՝ հետազոտված համերկրային Եւ մայրաքաղաքային հեռուստաալիքներում, Եւ հակառակը՝ պրոբլեմատիկ-քննադատական նյութերի գերակայությունը՝ մարզային ալիքներում: Այստեղ, ակնհայտորեն, ոչ այնքան մայրաքաղաքի Եւ մարզերի իրավիճակների տարբերությունն Է արտահայտվել, որքան համերկրային ալիքների հակումը՝ վերացարկվել իրական գործընթացներից, երբ անդրադառնում են այդ թեմային, այն լուսաբանել ընդհանուր գծերով, մինչդեռ մարզային ալիքները հաճախ գործ են ունենում ամենօրյա խնդիրների հետ:

«Համայնքում/տարածաշրջանում հողօգտագործման Եւ ջրօգտագործման հարցերը: Համայնքում/տարածաշրջանում շինարարության համար հողհատկացումները (հողի տնօրինման թափանցիկությունը, հասարակ քաղաքացիների համար մատչելիությունը, քաղաքաշինության նորմերին համապատասխանությունը, իրավական ընթացակարգերի պահպանումը Եւ բյուրոկրատացման մակարդակը)» թեմատիկ բաժինը 7-րդ տեղում Է՝ եթերային ժամանակով Եւ 6-րդը՝ անդրադարձի հաճախականությամբ: Ընդ որում, ինչպես Եւ «Համայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում» բաժինը, այն արժանացել Է ավելի առարկայական Եւ համարժեք լուսաբանման մարզային հեռուստաալիքներում: Մասնավորապես, երկու թեմատիկ բաժինների նկատմամբ պրոբլեմատիկ-քննադատական մոտեցում Է ցուցաբերել «Սոսի» (Կապան) հեռուստաալիքը: Ի տարբերություն մարզայինների, համերկրային Եւ մայրաքաղաքային հեռուստաալիքներն այդ թեմաներին անդրադարձել են ավելի մակերեսորեն: Առաջին հերթին դա վերաբերվում Է «Համայնքում/տարածաշրջանում հողօգտագործման Եւ ջրօգտագործման հարցերը: Համայնքում/տարածաշրջանում շինարարության համար հողհատկացումները (հողի տնօրինման թափանցիկությունը, հասարակ քաղաքացիների համար մատչելիությունը, քաղաքաշինության նորմերին համապատասխանությունը, իրավական ընթացակարգերի պահպանումը Եւ բյուրոկրատացման մակարդակը)» բաժնին: Չնայած, որ մայրաքաղաքում հանրային բողոքի ակտիվություն էր դիտարկվում, մասնավորապես՝ քաղաքացիների սեփականության օտարման հետ կապված, Եւ արդյունքում մի շարք հայցեր են ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան, նշված բաժնում գովասանական նյութերի քանակը միայն մի փոքր Է զիջել պրոբլեմատիկ-քննադատական նյութերի քանակին:

«ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների Եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը» 8-րդն Է՝ ընդհանուր եթերաժամանակով Եւ 9-րդը՝ հիշատակումների հաճախականությամբ: Այս երկու ցուցիչների միջև տարբերությունը բնական Է, եթե նկատի ունենանք, որ այս թեման էլ, ինչպես Եւ «...օրենսդ-

րությունը», պահանջում է հանգամանալից լուսաբանում: Միաժամանակ, երկու ամսվա ընթացքում 11 հեռուստաալիքներում այս թեմային նվիրված ընդամենը 38 հիշատակումը վկայում է թեմայի նկատմամբ թույլ հետաքրքրության մասին: Մինչդեռ 2009-ին առաջին անգամ ՏԻՄ ընտրություններին անմիջական մասնակցության (թեկնածուներ առաջադրելու) հնարավորություն կստանան քաղաքական կուսակցությունները: Ավելին, Երեւանի ավագանու ընտրությունները կդառնան Հայաստանի Հանրապետության պատմության մեջ առաջինը, երբ կկիրառվի 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգ: Եվ ակնկալելի էր, որ տեղական ընտրություններում քաղաքական բաղադրիչի ուժեղացումն ավելի մեծ ուշադրության պետք է արժանանար:

«Համայնքում/տարածաշրջանում շրջակա միջավայրի պահպանության հարցերը: Համայնքում/տարածաշրջանում կանաչ տարածքների եւ ջրամբարների պահպանումն ու զարգացումը» բաժինը 9-րդ տեղում էր՝ եթերային ժամանակով եւ 8-րդում՝ անդրադարձի հաճախականությամբ: Թեեւ ընտրությունների ժամանակամիջոցը համընկավ բնապահպանական խնդիրների նկատմամբ հանրային ուշադրության ակտիվացման հետ, այդ թվում՝ կապված Թեղուտի հանքավայրի շահագործման եւ Սեւանի ջրի բացթողումների ավելացման հետ, այդ խնդիրները հեռարձակող լրատվամիջոցների համարժեք ուշադրությանը չարժանացան: Ընդ որում, ինչպես ցույց տվեց այդ թեմայի քննարկումը «Մամուլի ակումբ+» հաղորդման ժամանակ, որը թողարկվում էր սույն ծրագրի շրջանակներում, ընտրարշավների ժամանակ թեկնածուները, որպես կանոն, փորձում էին շրջանցել այդ հարցերը: Հետաքրքրության բացակայությունը (թե՞ խնդիրներից խույս տալը) բնորոշ էր հետազոտված բոլոր հեռուստաընկերություններին, այդ թվում՝ այն տարածաշրջաններում հեռարձակվողներին, որտեղ շրջակա միջավայրի պահպանության խնդիրն առավել սուր էր, ինչպես, օրինակ, Լոռու մարզում:

«Համայնքում/տարածաշրջանում տրանսպորտի իրավիճակը» եւ **«Համայնքում/տարածաշրջանում սոցիալական ենթակառուցվածքների (զբոսայգիներ, մարզական եւ մանկական խաղահրապարակներ, բակեր եւ այլն) զարգացումը»** եթերային ժամանակով համապատասխանաբար 9-րդ եւ 11-րդ տեղերում են, իսկ անդրադարձի հաճախականությամբ՝ հակառակը: Ըստ երեւույթին, վերջին տարիներին այդ ուղղությունները ՉԼՄ-ները սկսել են գնահատել որպես «ավելորդ ճոխություն»: Հնարավոր է, որ բնակչությունը՝ իր կարծիքով առավել հրատապ, ամօրեական հարցերով մտահոգ, կիսում է այդ մոտեցումը: Այն դեպքում, երբ այս երկու թեմատիկ բաժիններին վերաբերող ոլորտները բավական խնդրահարույց են, հետազոտված հեռուստաալիքները առաջինին անդրադառնում են հազվագյուտ դեպքերում, իսկ երկրորդին՝ համերկրային եւ մայրաքաղաքային հեռուստաալիքների անդրադարձերը բացառապես գովասանական բնույթի էին: Այդ թվում, ինչ վերաբերվում է «...սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը», եթերում հայտնվում էին որոշ թեկնածուների գեղեցիկ նախընտրական ժեստերի մասին կիսագովազդային կյուբեր: Մարզային հեռուստաալիքներում այդ բաժինները լուսաբանվում էին ավելի իրատեսորեն, բայց նորից՝ միանգամայն պասիվ կերպով:

«Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը» եւ **«Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով (ներդրումների ներգրավում, տարածաշրջանային զարգացման ծրագրերի ստեղծում/ընդգրկում եւ այլն)»** թեմատիկ բաժինները, կարելի է ասել, ընդհանրապես դուրս են մնացել հետազոտված ՉԼՄ-ների տեսադաշտից (համապատասխանաբար՝ 12-րդ եւ 13-րդ տեղերում են ինչպես եթերային ժամանակով, այնպես էլ անդրադարձի հաճախականությամբ): Հետազոտված համերկրային եւ մայրաքաղաքային ՉԼՄ-ներից «...սերտաճման խնդիրն» անդրադարձել է միայն «ԱԼՄ»-ն (երկու անգամ), իսկ «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով...» թեման մեկական անգամ հնչել է միայն «ԳԱԼԱ»-ի եւ 32-ի եթերում: Ընդ որում, այս թեմատիկ բաժինների նկատմամբ հետաքրքրությունն է՛լ ավելի նվազեց հոկտեմբերին. առաջինի նկատմամբ եթերային ժամանակի հանրագումարը սեպտեմբերի համեմատ նվազեց գրեթե 6 անգամ, իսկ երկրորդը բոլորովին անտեսվեց հոկտեմբերին: Տվյալ դեպքում հեռուստաալիքներն արտացոլում են այն իրողությունը, որ երկրում տեղական ինքնակառավարման կայացման համար կարելորագույն երկու խնդիրները, հատկապես՝ ՏԻՄ-ի սերտաճումը բիզնեսի հետ, լրջորեն չի քննարկվում ոչ մի մակարդակով:

(Դիտարկման քննակական արդյունքները տես Հավելված 2-ում՝ «Աղյուսակներ»:)

ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՉԼՄ-ՆԵՐԻ ԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՅԱՆՁՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տվյալ հարցումն անցկացվել է 2008-ի հոկտեմբերին Հայաստանի տարածքում՝ Երեւանում, Գյումրիում, Կապանում եւ Վանաձորում: Երեւանում հարցման է ենթարկվել 400 մարդ, մյուս քաղաքներում՝ 200-ական: Հարցվողները 18 տարին լրացած՝ ՀՀ քաղաքացիներ են:

Հարցաթերթիկը նախատեսված էր՝ վերլուծելու հեռուստադիտողների նախապատվությունը՝ իրենց մատչելի հեռուստաալիք ընտրելիս, ինչպես նաեւ նրանց վերաբերմունքը՝ 2008-ի սեպտեմբեր-հոկտեմբերին ՏԻՄ ընտրությունների մասին՝ հեռուստաալիքների տրամադրած տեղեկությունների եւ հարակից այլ նորությունների որակի եւ քանակի մասին:

ԵՐԵՎԱՆ

Երեւանում հարցվածների 46.5%-ը 40 տարեկանից երիտասարդ էին, 53.5%-ը՝ 40-ից մեծ:
Հարցվածների 43%-ը տղամարդ են, 57%-ը՝ կին:
Հարցվածների 49.5%-ը բարձրագույն կրթություն չունեն, 50.5%-ն ունեն:

Երեւանում հարցվածների 75%-ն ասել են, որ հետաքրքրվում են իրենց համայնքի մասին նորություններով: Հարցվողների 66%-ի համար քաղաքական տեղեկատվության աղբյուր է հանդիսանում հեռուստատեսությունը: Միաժամանակ, հեռուստատեսության տրամադրած տեղեկությունները ճշգրիտ համարեց հարցվածների 17%-ը, մինչդեռ 63%-ը համարում է, որ դրանք ճշգրիտ են որոշ չափով, իսկ մնացած 20%-ն ընդհանրապես չի հավատում տեղեկությունների ճշգրտությանը: Հարցվածների 55%-ը գոհ է տեղեկությունները ժամանակին ներկայացնելուց, իսկ մնացած 45%-ը համարում է, որ տեղեկությունները օպերատիվ չեն տրամադրվում:

ՏԻՄ ընտրությունների շրջանում համայնքների արդիական խնդիրների լուսաբանման որակով առաջին տեղում է հայտնվել «Շանթ» հեռուստաընկերությունը՝ 41.5%-ով: Հարցվածների 25%-ը լավագույնն է համարում «Արմենիա»-ին, 15.5%-ը՝ Հ1-ին, 7.5%-ը՝ Հ2-ին, եւ 6%-ը՝ «ԱԼՄ»-ին: Հարցվածների 4.5%-ն այլ ալիքներ են մատնանշել: (Այստեղ եւ այսուհետ պետք է նկատի ունենալ, որ հարցվողները հաճախ այս կամ այն ալիքի նկատմամբ իրենց ընդհանուր վերաբերմունքը կամա թե ակամա տարածում են այդ ալիքի կողմից կոնկրետ թեմայի լուսաբանման վրա:)

Հարցին, թե որքանով են բավարարված 2008-ի սեպտեմբեր-հոկտեմբերին Հայաստանի հեռուստաալիքների տրամադրած՝ ՏԻՄ ընտրությունների մասին նորություններով, 12.2%-ը պատասխանել են, որ շատ բավարարված են, 31.3%-ը՝ որ բավարարված են որոշ չափով, 21.5%-ը՝ որ բավարարված չեն որոշ չափով, եւ 28%-ն ասել են, որ բոլորովին բավարարված չեն: Հարցվածների 7%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին: Հարցին, թե որքանով են բավարարված համայնքների արդիական խնդիրների մասին 2008-ի սեպտեմբեր-հոկտեմբե-

րին Հայաստանի հեռուստաալիքների տրամադրած նորություններով, 8.8%-ը պատասխանել է, որ շատ է բավարարված, 35.7%-ը՝ որ բավարարված է որոշ չափով, 22.3%-ը՝ որ բավարարված չէ որոշ չափով, եւ 27.4%-ն ասել է, որ բոլորովին բավարարված չէ: Հարցվածների 5.8%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին:

Այնուհետեւ, հարցվողներին խնդրել են պատասխանել, թե որքանով են բավարարված Հայաստանի հեռուստաալիքների կողմից՝ դիտարկման առարկա հանդիսացող 13 թեմաների լուսաբանմամբ: Երեւանի բնակիչների կարծիքները հետեւյալ պատկերն են կազմել:

1. Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր, ինքնուրույնություն, բյուջետային հնարավորություններ, աշխատանքի թափանցիկություն, հաշվետվողականություն (Երեւանի դեպքում՝ կարգավիճակի, ուղղակի կամ միջնորդավորված ընտրությունների հարցեր) եւ այլն.

- 6.5% - շատ բավարարված են
- 27.8% - բավարարված են որոշ չափով
- 27.8% - բավարարված չեն որոշ չափով
- 22.5% - բոլորովին բավարարված չեն
- 15.4% - դժվարացել են պատասխանել

2. ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը.

- 6.5% - շատ բավարարված են
- 25.3% - բավարարված են որոշ չափով
- 21.3% - բավարարված չեն որոշ չափով
- 35.4% - բոլորովին բավարարված չեն
- 11.5% - դժվարացել են պատասխանել

3. Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը.

- 3.9% - շատ բավարարված են
- 24.3% - բավարարված են որոշ չափով
- 20.3% - բավարարված չեն որոշ չափով
- 35.7% - բոլորովին բավարարված չեն
- 15.8% - դժվարացել են պատասխանել

4. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը.

- 11% - շատ բավարարված են
- 26.4% - բավարարված են որոշ չափով
- 17.5% - բավարարված չեն որոշ չափով
- 32.8% - բոլորովին բավարարված չեն
- 12.3% - դժվարացել են պատասխանել

5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով (ներդրումների ներգրավում, տարածաշրջանային զարգացման ծրագրերի ստեղծում/ընդգրկում եւ այլն).

- 4.9% - շատ բավարարված են
- 23.5% - բավարարված են որոշ չափով
- 15.8% - բավարարված չեն որոշ չափով
- 45.8% - բոլորովին բավարարված չեն
- 10% - դժվարացել են պատասխանել

6. Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում.

- 8.3% - շատ բավարարված են
- 39.4% - բավարարված են որոշ չափով
- 15.3% - բավարարված չեն որոշ չափով
- 33% - բոլորովին բավարարված չեն
- 4% - դժվարացել են պատասխանել

7. Համայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում.

- 3.8% - շատ բավարարված են
- 24% - բավարարված են որոշ չափով
- 17.5% - բավարարված չեն որոշ չափով
- 42.3% - բոլորովին բավարարված չեն
- 12.4% - դժվարացել են պատասխանել

8. Համայնքում/տարածաշրջանում բնակարաններով ապահովում եւ այլ սոցիալական խնդիրների լուծում.

- 2.7% - շատ բավարարված են
- 21.3% - բավարարված են որոշ չափով
- 24.2% - բավարարված չեն որոշ չափով
- 43.1% - բոլորովին բավարարված չեն
- 8.7% - դժվարացել են պատասխանել

9. Համայնքում/տարածաշրջանում բարենորոգումների (ճանապարհներ, կոմունալ տնտեսություն, շինարարության որակ, հասարակական վայրերի մաքրություն եւ բարեկարգվածություն եւ այլն) խնդիրը.

- 12.4% - շատ բավարարված են
- 33.8% - բավարարված են որոշ չափով
- 22.8% - բավարարված չեն որոշ չափով
- 24.7% - բոլորովին բավարարված չեն
- 6.3% - դժվարացել են պատասխանել

10. Համայնքում/տարածաշրջանում շրջակա միջավայրի պահպանության հարցերը: Համայնքում/տարածաշրջանում կանաչ տարածքների եւ ջրամբարների պահպանումն ու զարգացումը.

- 6.8% - շատ բավարարված են
- 29.9% - բավարարված են որոշ չափով
- 22.3% - բավարարված չեն որոշ չափով
- 34.6% - բոլորովին բավարարված չեն
- 6.4% - դժվարացել են պատասխանել

11. Համայնքում/տարածաշրջանում հողօգտագործման եւ ջրօգտագործման հարցերը: Համայնքում/տարածաշրջանում շինարարության համար հողհատկացումները (հողի տնօրինման թափանցիկությունը, հասարակ քաղաքացիների համար մատչելիությունը, քաղաքաշինության նորմերին համապատասխանությունը, իրավական ընթացակարգերի պահպանումը եւ բյուրոկրատացման մակարդակը).

- 4.8% - շատ բավարարված են
- 9.9% - բավարարված են որոշ չափով
- 27.7% - բավարարված չեն որոշ չափով
- 39.8% - բոլորովին բավարարված չեն
- 17.8% - դժվարացել են պատասխանել

12. Համայնքում/տարածաշրջանում տրանսպորտի իրավիճակը.

- 7.5% - շատ բավարարված են
- 29.3% - բավարարված են որոշ չափով
- 20.9% - բավարարված չեն որոշ չափով
- 33.8% - բոլորովին բավարարված չեն
- 8.5% - դժվարացել են պատասխանել

13. Համայնքում/տարածաշրջանում սոցիալական ենթակառուցվածքների (գրոսայգիներ, մարզական եւ մանկական խաղահրապարակներ, բակեր եւ այլն) զարգացումը.

- 9.8% - շատ բավարարված են
- 35.9% - բավարարված են որոշ չափով
- 19.4% - բավարարված չեն որոշ չափով
- 27.6% - բոլորովին բավարարված չեն
- 7.3% - դժվարացել են պատասխանել:

Երեւանում հարցվածներին խնդրել են նաեւ վերոհիշյալ 13 թեմատիկ բաժիններից նշել իրենց համար կարելուրագույն հինգ թեմա, որոնց մասին կուզեին ավելի շատ տեղեկություն ստանալ, եւ հինգ թեմա, որոնք ամենաքիչն են իրենց հետաքրքրում: Կարծիքները հետեւյալ պատկերն են ստեղծել:

Ամենակարեւոր թեմաները.

1. Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում - 20.3%
2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով - 13%
3. Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր - 12.8%
4. ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը - 10.8%
5. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը - 8.3%:

Նվազագույնը հետաքրքրող թեմաները.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր - 33.3%
2. ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը - 16.8%
3. Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը - 7.8%
4. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը - 6.8%
5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով - 6.3%:

ԳՅՈՒՄՐԻ

Գյուժրիում հարցվածների 51%-ը 40 տարեկանից երիտասարդ էին, 49%-ը՝ 40-ից մեծ:
Հարցվածների 46.5%-ը տղամարդ են, 53.5%-ը՝ կին:
Հարցվածների 63.5%-ը բարձրագույն կրթություն չունեն, 36.5%-ն՝ ունեն:

Գյուժրիում հարցվածների 71%-ն ասացին, որ հետաքրքրվում են իրենց համայնքի մասին նորություններով: Նրանց 90%-ի համար քաղաքական տեղեկատվության աղբյուր է հանդիսանում հեռուստատեսությունը: Միաժամանակ, հեռուստատեսության տրամադրած տեղեկատվությունը հարցվածների 12%-ը համարեց ճշգրիտ, մինչդեռ 61%-ը համարում է, որ տեղեկատվությունը ճշգրիտ է որոշ չափով, իսկ 12.5%-ն ընդհանրապես չեն հավատում հեռուստատեսության մատուցած տեղեկատվության ճշգրտությանը: 14.5%-ը դժվարացել են պատասխանել: Հարցվածների 69%-ը գոհ է տեղեկությունները ժամանակին ներկայացնելուց, իսկ 31%-ը համարում է, որ տեղեկությունները օպերատիվ չեն տրամադրվում:

Համայնքների համար արդիական խնդիրների լուսաբանման որակով առաջին տեղում է «ԳԱԼԱ» հեռուստաընկերությունը՝ 36%: Հարցվածների 35.5%-ն այդ հարցում լավագույնն է համարում «Շանթ»-ին (Գյուժրիի տարբերակը), 14.5%-ը՝ տեղական «Ցայգ» հեռուստաալիքին, 4%-ը՝ Յ1-ին, 3%-ը՝ «Արմենիա»-ին, եւ 2.5%-ը՝ «Շիրակ»-ին: Հարցվածների 4.5%-ը նշել են այլ հեռուստաալիքներ:

Հարցին, թե որքանով են բավարարված 2008-ի սեպտեմբեր-հոկտեմբերին Հայաստանի հեռուստաալիքների տրամադրած՝ ՏԻՄ ընտրությունների մասին նորություններով, 7.5%-ը պատասխանել են, որ շատ բավարարված են, 54.5%-ը՝ որ բավարարված են որոշ չափով, 18.5%-ը՝ որ բավարարված չեն որոշ չափով, եւ 13.5%-ն ասել են, որ բոլորովին բավարարված չեն: Հարցվածների 6%-ը դժվարացել է պատասխանել: Հարցին, թե որքանով են բավարարված համայնքների արդիական խնդիրների մասին 2008-ի սեպտեմբեր-հոկտեմբերին Հայաստանի հեռուստաալիքների տրամադրած նորություններով, 10.5%-ը պատասխանել է, որ շատ է բավարարված, 49%-ը՝ որ բավարարված է որոշ չափով, 20.5%-ը՝ որ բավարարված չէ որոշ չափով, եւ 14%-ն ասել է, որ բոլորովին բավարարված չէ: Հարցվածների 6%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին:

Այնուհետեւ, հարցվողներին խնդրել են պատասխանել, թե որքանով են բավարարված Հայաստանի հեռուստաալիքների կողմից՝ դիտարկման առարկա հանդիսացող 13 թեմաների լուսաբանմամբ: Գյուժրիի բնակիչների կարծիքները հետեւյալ պատկերն են կազմել:

1. Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր, ինքնուրույնություն, բյուջետային հնարավորություններ, աշխատանքի թափանցիկություն, հաշվետվողականություն (Երեւանի դեպքում՝ կարգավիճակի, ուղղակի կամ միջնորդավորված ընտրությունների հարցեր) եւ այլն.

7% - շատ բավարարված են
28% - բավարարված են որոշ չափով
11.5% - բավարարված չեն որոշ չափով
34% - բոլորովին բավարարված չեն
19.5% - դժվարացել են պատասխանել

2. ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը.

4.5% - շատ բավարարված են
31% - բավարարված են որոշ չափով
24% - բավարարված չեն որոշ չափով
23.5% - բոլորովին բավարարված չեն
17% - դժվարացել են պատասխանել

3. Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը.

- 4% - շատ բավարարված են
- 17% - բավարարված են որոշ չափով
- 18.5% - բավարարված չեն որոշ չափով
- 39.5% - բոլորովին բավարարված չեն
- 21% - դժվարացել են պատասխանել

4. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը.

- 5% - շատ բավարարված են
- 42% - բավարարված են որոշ չափով
- 27% - բավարարված չեն որոշ չափով
- 15% - բոլորովին բավարարված չեն
- 11% - դժվարացել են պատասխանել

5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով (ներդրումների ներգրավում, տարածաշրջանային զարգացման ծրագրերի ստեղծում/ընդգրկում եւ այլն).

- 3.5% - շատ բավարարված են
- 22.5% - բավարարված են որոշ չափով
- 19.5% - բավարարված չեն որոշ չափով
- 38.5% - բոլորովին բավարարված չեն
- 16% - դժվարացել են պատասխանել

6. Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում.

- 12% - շատ բավարարված են
- 29.5% - բավարարված են որոշ չափով
- 20.5% - բավարարված չեն որոշ չափով
- 26% - բոլորովին բավարարված չեն
- 12% - դժվարացել են պատասխանել

7. Համայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում.

- 3.5% - շատ բավարարված են
- 22% - բավարարված են որոշ չափով
- 16% - բավարարված չեն որոշ չափով
- 41% - բոլորովին բավարարված չեն
- 17.5% - դժվարացել են պատասխանել

8. Համայնքում/տարածաշրջանում բնակարաններով ապահովում եւ այլ սոցիալական խնդիրների լուծում.

- 6.5% - շատ բավարարված են
- 23.5% - բավարարված են որոշ չափով
- 35.5% - բավարարված չեն որոշ չափով
- 26.5% - բոլորովին բավարարված չեն
- 8% - դժվարացել են պատասխանել

9. Համայնքում/տարածաշրջանում բարենորոգումների (ճանապարհներ, կոմունալ տնտեսություն, շինարարության որակ, հասարակական վայրերի մաքրություն եւ բարեկարգվածություն եւ այլն) խնդիրը.

5% - շատ բավարարված են
12.5% - բավարարված են որոշ չափով
34.5% - բավարարված չեն որոշ չափով
37% - բոլորովին բավարարված չեն
11% - դժվարացել են պատասխանել

10. Համայնքում/տարածաշրջանում շրջակա միջավայրի պահպանության հարցերը: Համայնքում/տարածաշրջանում կանաչ տարածքների եւ ջրամբարների պահպանումն ու զարգացումը.

3% - շատ բավարարված են
16% - բավարարված են որոշ չափով
16% - բավարարված չեն որոշ չափով
53.5% - բոլորովին բավարարված չեն
11.5% - դժվարացել են պատասխանել

11. Համայնքում/տարածաշրջանում հողօգտագործման եւ ջրօգտագործման հարցերը: Համայնքում/տարածաշրջանում շինարարության համար հողհատկացումները (հողի տնօրինման թափանցիկությունը, հասարակ քաղաքացիների համար մատչելիությունը, քաղաքաշինության նորմերին համապատասխանությունը, իրավական ընթացակարգերի պահպանումը եւ բյուրոկրատացման մակարդակը).

4% - շատ բավարարված են
11.5% - բավարարված են որոշ չափով
19% - բավարարված չեն որոշ չափով
51.5% - բոլորովին բավարարված չեն
14% - դժվարացել են պատասխանել

12. Համայնքում/տարածաշրջանում տրանսպորտի իրավիճակը.

5% - շատ բավարարված են
28.5% - բավարարված են որոշ չափով
22.5% - բավարարված չեն որոշ չափով
35.5% - բոլորովին բավարարված չեն
8.5% - դժվարացել են պատասխանել

13. Համայնքում/տարածաշրջանում սոցիալական ենթակառուցվածքների (զբոսայգիներ, մարզական եւ մանկական խաղահրապարակներ, բակեր եւ այլն) զարգացումը.

4% - շատ բավարարված են
15% - բավարարված են որոշ չափով
15.5% - բավարարված չեն որոշ չափով
54.5% - բոլորովին բավարարված չեն
11% - դժվարացել են պատասխանել:

Գյումրիում անցկացված հարցման մասնակիցներին նաեւ խնդրել են վերոհիշյալ 13 թեմատիկ բաժիններից նշել իրենց համար կարեւորագույն հինգ թեմա, որոնց մասին կուզեին ավելի շատ տեղեկություն ստանալ, եւ հինգ թեմա, որոնք ամենաքիչն են իրենց հետաքրքրում: Կարծիքները հետեւյալ պատկերն են ստեղծել:

Ամենակարեւոր թեմաները.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով - 12.5%
2. Տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում - 11.5%
3. Բնակարաններով ապահովում եւ այլ սոցիալական խնդիրների լուծում - 10.6%

4. Համայնքում/տարածաշրջանում բարենորոգումների (ճանապարհներ, կոմունալ տնտեսություն, շինարարության որակ, հասարակական վայրերի մաքրություն եւ բարեկարգվածություն եւ այլն) խնդիրը - 10.5%

5. Առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում - 10%:

Նվազագույնը հետաքրքրող թեմաները.

1. Համայնքում/տարածաշրջանում սոցիալական ենթակառուցվածքների (գրոսայգիներ, մարզական եւ մանկական խաղահրապարակներ, բակեր եւ այլն) զարգացումը - 13.1%

2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը - 13%

3. ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը - 12%

4. Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը - 10%

5. Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր - 9%:

ԿԱՊԱՆ

Կապանում հարցվածների 50.2%-ը 40 տարեկանից երիտասարդ էին, 49.8%-ը՝ 40-ից մեծ:

Հարցվածների 36.5%-ը տղամարդ են, 63.5%-ը՝ կին:

Հարցվածների 62.1%-ը բարձրագույն կրթություն չունեն, 37.9%-ն ունեն:

Կապանում հարցվածների 89%-ն ասել են, որ հետաքրքրվում են իրենց համայնքի մասին նորություններով: Հարցվողների 91%-ի համար քաղաքական տեղեկատվության աղբյուր է հանդիսանում հեռուստատեսությունը: Միաժամանակ, հարցվածների միայն 12%-ը հեռուստատեսության տրամադրած տեղեկությունները ճշգրիտ համարեց, մինչդեռ 69%-ը համարում է, որ դրանք ճշգրիտ են որոշ չափով, իսկ մնացած 4%-ն ընդհանրապես չի հավատում տեղեկությունների ճշգրտությանը: 15%-ը դժվարացել է պատասխանել: Հարցվածների 78%-ը գոհ է տեղեկությունները ժամանակին տրամադրելուց, իսկ մնացած 22%-ը համարում է, որ դրանք օպերատիվ չեն տրամադրվում:

ՏԻՄ ընտրությունների շրջանում համայնքների արդիական խնդիրների լուսաբանման որակով առաջին տեղում է «Խուստուփ» տեղական հեռուստաալիքը՝ 42%-ով: Հարցվածների 21%-ն այդ հարցում լավագույնն է համարում մեկ այլ տեղական ալիքի՝ «Սոսի»-ին, 18%-ը՝ Յ1-ին, 15%-ը՝ «Արմենիա»-ին, 3%-ը՝ Յ2-ին, եւ մոտ 1%-ը՝ «ԱԼՄ»-ին: (Այստեղ եւ այսուհետ պետք է նկատի ունենալ համապատասխան տարածաշրջաններում հեռուստաալիքների հասանելիությունը, Կապանի դեպքում՝ նաեւ այն հանգամանքը, որ քաղաքի ռելիեֆը դժվարացնում է որակյալ ռադիոազդակի ընդունումը, ինչի հետ կապված ավելի հասանելի է «Խուստուփ» կաբելային հեռուստատեսությունը):

Հարցին, թե որքանով են բավարարված 2008-ի սեպտեմբեր-հոկտեմբերին Հայաստանի հեռուստաալիքների տրամադրած՝ ՏԻՄ ընտրությունների մասին նորություններով, 13%-ը պատասխանել են, որ շատ բավարարված են, 54%-ը՝ որ բավարարված են որոշ չափով, 16%-ը՝ որ բավարարված չեն որոշ չափով, եւ 9%-ն ասել են, որ բոլորովին բավարարված չեն: Հարցվածների 8%-ը դժվարացել է պատասխանել: Հարցին, թե որքանով են բավարարված համայնքների արդիական խնդիրների մասին 2008-ի սեպտեմբեր-հոկտեմբերին Հայաստանի հեռուստաալիքների տրամադրած նորություններով, 3%-ը պատասխանել է, որ շատ է բավարարված, 40%-ը՝ որ բավարարված է որոշ չափով, 26%-ը՝ որ բավարարված չէ որոշ չափով,

եւ 21%-ն ասել է, որ բոլորովին բավարարված չէ: Հարցվածների 10%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին:

Այնուհետեւ, հարցվողներին խնդրել են պատասխանել, թե որքանով են բավարարված Հայաստանի հեռուստաալիքների կողմից՝ դիտարկման առարկա հանդիսացող 13 թեմաների լուսաբանմամբ: Կապանի բնակիչների կարծիքները հետեւյալ պատկերն են կազմել:

1. Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր, ինքնուրույնություն, բյուջետային հնարավորություններ, աշխատանքի թափանցիկություն, հաշվետվողականություն (Երեւանի դեպքում՝ կարգավիճակի, ուղղակի կամ միջնորդավորված ընտրությունների հարցեր) եւ այլն.

- 5% - շատ բավարարված են
- 41% - բավարարված են որոշ չափով
- 25% - բավարարված չեն որոշ չափով
- 9% - բոլորովին բավարարված չեն
- 20% - դժվարացել են պատասխանել

2. ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը.

- 5% - շատ բավարարված են
- 35% - բավարարված են որոշ չափով
- 25% - բավարարված չեն որոշ չափով
- 15% - բոլորովին բավարարված չեն
- 20% - դժվարացել են պատասխանել

3. Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը.

- 4.5% - շատ բավարարված են
- 33% - բավարարված են որոշ չափով
- 22.5% - բավարարված չեն որոշ չափով
- 20% - բոլորովին բավարարված չեն
- 20% - դժվարացել են պատասխանել

4. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը.

- 18.5% - շատ բավարարված են
- 54.5% - բավարարված են որոշ չափով
- 12% - բավարարված չեն որոշ չափով
- 6% - բոլորովին բավարարված չեն
- 9% - դժվարացել են պատասխանել

5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով (ներդրումների ներգրավում, տարածաշրջանային զարգացման ծրագրերի ստեղծում/ընդգրկում եւ այլն).

- 4% - շատ բավարարված են
- 31% - բավարարված են որոշ չափով
- 20% - բավարարված չեն որոշ չափով
- 22% - բոլորովին բավարարված չեն
- 23% - դժվարացել են պատասխանել

6. Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում.

- 12.5% - շատ բավարարված են
- 64% - բավարարված են որոշ չափով
- 10.5% - բավարարված չեն որոշ չափով
- 10% - բոլորովին բավարարված չեն
- 3% - դժվարացել են պատասխանել

7. Համայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում.

- 3% - շատ բավարարված են
- 26.5% - բավարարված են որոշ չափով
- 24% - բավարարված չեն որոշ չափով
- 37.5% - բոլորովին բավարարված չեն
- 9% - դժվարացել են պատասխանել

8. Համայնքում/տարածաշրջանում բնակարաններով ապահովում եւ այլ սոցիալական խնդիրների լուծում.

- 5% - շատ բավարարված են
- 28% - բավարարված են որոշ չափով
- 17% - բավարարված չեն որոշ չափով
- 33.5% - բոլորովին բավարարված չեն
- 16.5% - դժվարացել են պատասխանել

9. Համայնքում/տարածաշրջանում բարենորոգումների (ճանապարհներ, կոմունալ տնտեսություն, շինարարության որակ, հասարակական վայրերի մաքրություն եւ բարեկարգվածություն եւ այլն) խնդիրը.

- 11.5% - շատ բավարարված են
- 42% - բավարարված են որոշ չափով
- 29% - բավարարված չեն որոշ չափով
- 12.5% - բոլորովին բավարարված չեն
- 5% - դժվարացել են պատասխանել

10. Համայնքում/տարածաշրջանում շրջակա միջավայրի պահպանության հարցերը: Համայնքում/տարածաշրջանում կանաչ տարածքների եւ ջրամբարների պահպանումն ու զարգացումը.

- 4.5% - շատ բավարարված են
- 45.5% - բավարարված են որոշ չափով
- 26.5% - բավարարված չեն որոշ չափով
- 20% - բոլորովին բավարարված չեն
- 3.5% - դժվարացել են պատասխանել

11. Համայնքում/տարածաշրջանում հողօգտագործման եւ ջրօգտագործման հարցերը: Համայնքում/տարածաշրջանում շինարարության համար հողհատկացումները (հողի տնօրինման թափանցիկությունը, հասարակ քաղաքացիների համար մատչելիությունը, քաղաքաշինության նորմերին համապատասխանությունը, իրավական ընթացակարգերի պահպանումը եւ բյուրոկրատացման մակարդակը).

- 5% - շատ բավարարված են
- 6% - բավարարված են որոշ չափով
- 40% - բավարարված չեն որոշ չափով
- 23% - բոլորովին բավարարված չեն
- 26% - դժվարացել են պատասխանել

12. Համայնքում/տարածաշրջանում տրանսպորտի իրավիճակը.

- 9.5% - շատ բավարարված են
- 55% - բավարարված են որոշ չափով
- 19.5% - բավարարված չեն որոշ չափով
- 12.5% - բոլորովին բավարարված չեն
- 3.5% - դժվարացել են պատասխանել

13. Համայնքում/տարածաշրջանում սոցիալական ենթակառուցվածքների (գրոսայգիներ, մարզական եւ մանկական խաղահրապարակներ, բակեր եւ այլն) զարգացումը.

- 18.5% - շատ բավարարված են
- 37.5% - բավարարված են որոշ չափով
- 20% - բավարարված չեն որոշ չափով
- 18% - բոլորովին բավարարված չեն
- 6% - դժվարացել են պատասխանել:

Կապանում հարցվածներին խնդրել են նաեւ վերոհիշյալ 13 թեմատիկ բաժիններից նշել իրենց համար կարելուրագույն հինգ թեմա, որոնց մասին կուզեին ավելի շատ տեղեկություն ստանալ, եւ հինգ թեմա, որոնք ամենաքիչն են իրենց հետաքրքրում: Կարծիքները հետեւյալ պատկերն են ստեղծել:

Ամենակարեւոր թեմաները.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր - 11.8%
2. Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը - 11.3%
3. ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը - 9.9%
4. Սոցիալական ենթակառուցվածքների (գրոսայգիներ, մարզական եւ մանկական խաղահրապարակներ, բակեր եւ այլն) զարգացումը - 9.4%
5. Համայնքում/տարածաշրջանում տրանսպորտի իրավիճակը - 7.9%:

Նվազագույնը հետաքրքրող թեմաները.

1. ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը - 18.2%
2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը - 15.3%
3. Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը - 13.8%
4. Համայնքում/տարածաշրջանում տրանսպորտի իրավիճակը - 12.8%
5. Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր - 11.3%:

ՎԱՆԱՃՈՐ

Վանաձորում հարցվածների 56.4%-ը 40 տարեկանից երիտասարդ էին, 43.6%-ը՝ 40-ից մեծ: Զարգվածների 33.2%-ը տղամարդ են, 66.8%-ը՝ կին: Զարգվածների 58.4%-ը բարձրագույն կրթություն չունեն, 41.6%-ն ունեն:

Վանաձորում հարցվածների 29.5%-ն ասել են, որ հետաքրքրվում են իրենց համայնքի մասին նորություններով: Զարգվողների 81%-ի համար քաղաքական տեղեկատվության աղբյուր է հանդիսանում հեռուստատեսությունը: Միաժամանակ, հարցվածների միայն 17%-ն է ճշգրիտ համարում հեռուստատեսության տրամադրած տեղեկությունները, մինչդեռ 63.5%-ը համարում է, որ դրանք ճշգրիտ են որոշ չափով, իսկ մնացած 12%-ը բոլորովին չի հավատում տեղեկությունների ճշգրտությանը: 7.5%-ը դժվարացել է պատասխանել: Զարգվածների 58%-ը գոհ է տեղեկությունները ժամանակին տրամադրելուց, իսկ 42%-ը համարում է, որ դրանք օպերատիվ չեն տրամադրվում:

ՏԻՄ ընտրությունների շրջանում համայնքների արդիական խնդիրների լուսաբանման որակով առաջին տեղում է «Լոռի» տեղական հեռուստաալիքը՝ 35.6%-ով: Զարգվածների 18.8%-ն այդ հարցում լավագույնն է համարում մեկ այլ տեղական ալիքի՝ «ՄԻԳ»-ին, 16.8%-ը՝ «Արմենիա»-ին, 9.9%-ը՝ «Շանթ»-ին, 7.9%-ը՝ ՅՅ-ին, 4%-ը՝ «ԱԼՄ»-ին, եւ 1.5%-ը մատնանշել են Զայկական երկրորդ հեռուստաալիքին: Զարգվողների 5.5%-ը նշել է այլ հեռուստաալիքներ:

Զարցին, թե որքանով են բավարարված 2008-ի սեպտեմբեր-հոկտեմբերին Զայաստանի հեռուստաալիքների տրամադրած՝ ՏԻՄ ընտրությունների մասին նորություններով, 19%-ը պատասխանել են, որ շատ բավարարված են, 47%-ը՝ որ բավարարված են որոշ չափով, 13%-ը՝ որ բավարարված չեն որոշ չափով, եւ 20%-ն ասել են, որ բոլորովին բավարարված չեն: Զարգվածների 1%-ը դժվարացել է պատասխանել: Զարցին, թե որքանով են բավարարված համայնքների հրատապ խնդիրների մասին 2008-ի սեպտեմբեր-հոկտեմբերին Զայաստանի հեռուստաալիքների տրամադրած նորություններով, 8%-ը պատասխանել է, որ շատ է բավարարված, 45%-ը՝ որ բավարարված է որոշ չափով, 17%-ը՝ որ բավարարված չէ որոշ չափով, եւ 29%-ն ասել է, որ բոլորովին բավարարված չէ: Զարգվածների 1%-ը դժվարացել է պատասխանել:

Այնուհետեւ, հարցվողներին խնդրել են պատասխանել, թե որքանով են բավարարված Զայաստանի հեռուստաալիքների կողմից՝ դիտարկման առարկա հանդիսացող 13 թեմաների լուսաբանմամբ: Վանաձորի բնակիչների կարծիքները հետեւյալ պատկերն են կազմել:

1. Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր.

- 4% - շատ բավարարված են
- 30% - բավարարված են որոշ չափով
- 22% - բավարարված չեն որոշ չափով
- 42% - բոլորովին բավարարված չեն
- 2% - դժվարացել են պատասխանել

2. ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը.

- 7% - շատ բավարարված են
- 31% - բավարարված են որոշ չափով
- 15% - բավարարված չեն որոշ չափով
- 30.5% - բոլորովին բավարարված չեն
- 16.5% - դժվարացել են պատասխանել

3. Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը.

3% - շատ բավարարված են
22.5% - բավարարված են որոշ չափով
13% - բավարարված չեն որոշ չափով
44.5% - բոլորովին բավարարված չեն
17% - դժվարացել են պատասխանել

4. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը.

18% - շատ բավարարված են
43% - բավարարված են որոշ չափով
18.5% - բավարարված չեն որոշ չափով
19% - բոլորովին բավարարված չեն
1.5% - դժվարացել են պատասխանել

5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով (ներդրումների ներգրավում, տարածաշրջանային զարգացման ծրագրերի ստեղծում/ընդգրկում եւ այլն).

6% - շատ բավարարված են
26.5% - բավարարված են որոշ չափով
13.5% - բավարարված չեն որոշ չափով
44.5% - բոլորովին բավարարված չեն
9.5% - դժվարացել են պատասխանել

6. Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում.

8.5% - շատ բավարարված են
50% - բավարարված են որոշ չափով
8.5% - բավարարված չեն որոշ չափով
32% - բոլորովին բավարարված չեն
1% - դժվարացել են պատասխանել

7. Համայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում.

5% - շատ բավարարված են
22% - բավարարված են որոշ չափով
15.5% - բավարարված չեն որոշ չափով
53.5% - բոլորովին բավարարված չեն
4% - դժվարացել են պատասխանել

8. Համայնքում/տարածաշրջանում բնակարաններով ապահովում եւ այլ սոցիալական խնդիրների լուծում.

3% - շատ բավարարված են
28% - բավարարված են որոշ չափով
19.5% - բավարարված չեն որոշ չափով
44.5% - բոլորովին բավարարված չեն
5% - դժվարացել են պատասխանել

9. Համայնքում/տարածաշրջանում բարենորոգումների (ճանապարհներ, կոմունալ տնտեսություն, շինարարության որակ, հասարակական վայրերի մաքրություն եւ բարեկարգվածություն եւ այլն) խնդիրը.

4% - շատ բավարարված եմ
44.5% - բավարարված եմ որոշ չափով
14.5% - բավարարված չեմ որոշ չափով
33% - բոլորովին բավարարված չեմ
4% - դժվարացել եմ պատասխանել

10. Համայնքում/տարածաշրջանում շրջակա միջավայրի պահպանության հարցերը: Համայնքում/տարածաշրջանում կանաչ տարածքների եւ ջրամբարների պահպանումն ու զարգացումը.

4.5% - շատ բավարարված եմ
29% - բավարարված եմ որոշ չափով
20% - բավարարված չեմ որոշ չափով
37% - բոլորովին բավարարված չեմ
9.5% - դժվարացել եմ պատասխանել

11. Համայնքում/տարածաշրջանում հողօգտագործման եւ ջրօգտագործման հարցերը: Համայնքում/տարածաշրջանում շինարարության համար հողհատկացումները (հողի տնօրինման թափանցիկությունը, հասարակ քաղաքացիների համար մատչելիությունը, քաղաքաշինության նորմերին համապատասխանությունը, իրավական ընթացակարգերի պահպանումը եւ բյուրոկրատացման մակարդակը).

3% - շատ բավարարված եմ
5% - բավարարված եմ որոշ չափով
25.5% - բավարարված չեմ որոշ չափով
52% - բոլորովին բավարարված չեմ
14.5% - դժվարացել եմ պատասխանել

12. Համայնքում/տարածաշրջանում տրանսպորտի իրավիճակը.

4.5% - շատ բավարարված եմ
34% - բավարարված եմ որոշ չափով
17% - բավարարված չեմ որոշ չափով
37.5% - բոլորովին բավարարված չեմ
7% - դժվարացել եմ պատասխանել

13. Համայնքում/տարածաշրջանում սոցիալական ենթակառուցվածքների (զբոսայգիներ, մարզական եւ մանկական խաղահրապարակներ, բակեր եւ այլն) զարգացումը.

7% - շատ բավարարված եմ
38% - բավարարված եմ որոշ չափով
16% - բավարարված չեմ որոշ չափով
37% - բոլորովին բավարարված չեմ
2% - դժվարացել եմ պատասխանել:

Վանաձորում հարցվածներին նաեւ խնդրել եմ վերոհիշյալ 13 թեմատիկ բաժիններից նշել իրենց համար կարեւորագույն հինգ թեմա, որոնց մասին կուզեին ավելի շատ տեղեկություն ստանալ, եւ հինգ թեմա, որոնք ամենաքիչն են իրենց հետաքրքրում: Կարծիքները հետեւյալ պատկերն են ստեղծել:

Ամենակարելիոր թեմաները.

1. Համայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում - 27.2%
2. Համայնքում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում - 19.8%
3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով - 11.9%
4. Համայնքում/տարածաշրջանում բնակարաններով ապահովում եւ այլ սոցիալական խնդիրների լուծում - 7.4%
5. Համայնքում/տարածաշրջանում հողօգտագործման եւ ջրօգտագործման հարցերը: Համայնքում/տարածաշրջանում շինարարության համար հողհատկացումները - 6.9%:

Նվազագույնը հետաքրքրող թեմաները.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր - 27.2%
2. ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը - 13.9%
3. Սոցիալական ենթակառուցվածքների (գբոսայգիներ, մարզական եւ մանկական խաղահրապարակներ, բակեր եւ այլն) զարգացումը - 11.9%
4. Համայնքում/տարածաշրջանում տրանսպորտի իրավիճակը - 8.5%
5. Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը - 8.4%:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ՝ ԸՍՏ ՉԼՍ-ՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՅԱՆՈՒՐ ՅԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Յետագոտված մի շարք հեռուստաալիքներում լուսաբանումից դուրս են մնացել երեք եւ ավելի թեմատիկ բաժիններ: Դրանց թվում է նաեւ **Յայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքը**, որը ոչ մի անգամ չի անդրադարձել երեք բաժնի, որից երկուսը մենք վերագրել ենք ընդհանուր թեմաների, եւ որոնց նկատմամբ հետաքրքրություն պետք է դրսեւորվեր հենց հանրային հեռարձակողի կողմից: Այդ թեմաներն են «ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը» եւ «Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը»: Յ1-ը միակն էր հետագոտված բոլոր հեռուստաալիքների մեջ, որտեղ դիտարկման թեմային գովասանական անդրադարձերը ավելի շատ էին ե՛լ պրոբլեմատիկ-քննադատական, ե՛լ զուտ տեղեկատվական անդրադարձերից: Ընտրարաշավի հետ այս կամ այն կերպ կապված հարցերի նմանօրինակ լուսաբանումը կասկած է հարուցում դրա համարժեքության աստիճանի մասին:

Յամադրելով դիտարկման արդյունքները առանձին հեռուստաընկերությունների դեպքում (ինչպես նաեւ՝ բոլորի միասին) սոցիոլոգիական հարցման արդյունքների հետ, հնարավոր է տեսնել, թե որքանո՞վ էին ընտրարաշավների համատեքստում բավարարվում հեռուստասարանների ակնկալիքները հեռարձակող ՉԼՍ-ներից: Յ1-ի դեպքում, որը, ինչպես ակնկալվում է, պետք է հաշվի առնի ամբողջ երկրի տարածքում լսարանի պահանջմունքները, ակնհայտ է, որ հանրային հեռարձակողը բավարարում է հետաքրքրությունը «Յամայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում» թեմայի նկատմամբ: Նաեւ հիմնականում համարժեք ուշադրություն է հատկացվում «Յամայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում» թեմային: Մի փոքր ավելի ակտիվորեն, քան պահանջում էր լսարանի հետաքրքրությունը, Յ1-ն անդրադառնում էր «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացին»: Եվ արդեն շատ մեծ էր տարբերությունը «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով» բաժնի նկատմամբ առաջարկի եւ պահանջարկի միջեւ: Թեմային հեռուստաալիքն ընդհանրապես ուշադրություն չի հատկացրել:

Յամերկրային **Յայկական երկրորդ հեռուստաալիքը** բոլոր հետագոտված հեռուստաալիքներից ամենաքիչն է հետաքրքրություն ցուցաբերել դիտարկման թեմայի նկատմամբ: Ընդ որում, թեմային հատկացված եթերային ժամանակը հավասարապես է բաշխվել թեմատիկ բաժինների միջեւ: Յեռուստաընկերությունն ակնհայտորեն նախապատվություն էր տալիս զուտ տեղեկատվական բնույթի նյութերին՝ այդպիսին էր թեմային անդրադարձի գրեթե երեք-քառորդը:

Նկատի ունենալով այս ալիքի համեմատաբար համաչափ, բայց եւ միանգամայն սահմանափակ ուշադրությունը դիտարկման թեմատիկ բաժիններին, նրա դեպքում դժվար է փաստել լսարանի պահանջմունքների համաչափ բավարարման մասին: Ակնհայտ է միայն, որ հեռուստադիտողների շրջանում առավել նախընտրելի թեման (դիտարկման թեմատիկ բաժիններից)՝ «Յամայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում», Յ2-ում ամենաշատ եթերաժամանակին է արժանացել:

«Արմենիա» համերկրային հեռուստաալիքի հաղորդումներում, ի տարբերություն Յ2-ի, գերակայում էին դիտարկման թեմայի մասին պրոբլեմատիկ-քննադատական եւ գովասանական

հիշատակումները: Ընդհանուր առմամբ, այս հեռուստաալիքը նույնպես առանձնապես հետաքրքրություն չի դրսևորել թեմայի նկատմամբ: Եթե Հ2-ը բոլոր հետազոտված հեռուստաալիքների մեջ ամենաքիչ եթերաժամանակն է հատկացրել դիտարկման բոլոր թեմատիկ բաժիններին, ապա «Արմենիա»-ն բոլորից (բացի «Շիրակ» հեռուստաընկերությունից, որը առանձին դեպք է՝ *տես ստորել*) քիչ անգամ է անդրադարձել թեմային:

Դիտարկման թեմայի լուսաբանումն «Արմենիա» ալիքով ամենից շատ համապատասխանում էր գյումրեցիների ակնկալիքներին: Բայց, ընդհանուր առմամբ, դիտարկվել է լսարանի մեծամասնության հետաքրքրությունների հետ բավական ուժեղ անհամապատասխանություն (ընդգծենք՝ նկատի ունենք տվյալ դիտարկման թեման, ոչ թե հեռուստաալիքի հաղորդումներն ընդհանրապես): Ինչպես եւ Հ1-ի դեպքում, «Արմենիա»-ն համեմատաբար համարժեք էր բավարարում դիտողների հետաքրքրությունը՝ «Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում» թեմատիկ բաժնում: Եվ փաստացիորեն չբավարարված մնաց այնպիսի բաժնի նկատմամբ պահանջարկը, ինչպիսին է «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով»:

«ԱԼՄ» համերկրային հեռուստաալիքը, ինչպես եւ Հ2-ը, եթերաժամանակը համեմատաբար հավասար է բաշխել թեմատիկ բաժինների միջև: Ընդ որում, ալիքի լրատվական ծրագրերում մեծ տոկոս են կազմել գովասանական հիշատակումները, իսկ բանավեճային հաղորդումներում բոլոր հիշատակումները պրոբլեմատիկ-քննադատական բնույթի էին, ինչը կարելի է վերագրել այդ հաղորդումների յուրահատուկ վարմանը. խնդիրները բարձրացվում են, քննադատություն է հնչում, սակայն կոնկրետ հասցեատերեր, լուծումներ հազվադեպ են բարձրաձայնվում եւ առաջարկվում: Ըստ երեւույթին, հենց դիտարկման թեմային անդրադարձի որակով է բացատրվում «ԱԼՄ»-ի նկատմամբ հեռուստադիտողների նվազագույն (հետազոտված բոլոր համերկրային ալիքների մեջ) հետաքրքրությունը:

«ԱԼՄ»-ի լուսաբանման ծավալը համահունչ էր հեռուստադիտողների պահանջմունքներին այնպիսի թեմատիկ բաժիններում, ինչպիսիք են «Համայնքում/տարածաշրջանում բնակարաններով ապահովում եւ այլ սոցիալական խնդիրների լուծումը», «Համայնքում/տարածաշրջանում բարենորոգումների (ճանապարհներ, կոմունալ տնտեսություն, շինարարության որակ, հասարակական վայրերի մաքրություն եւ բարեկարգվածություն եւ այլն) խնդիրը», «Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացումը», «ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը»: Ավելի քիչ էր բավարարվում լսարանի հետաքրքրությունը «Համայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում» թեմայի նկատմամբ: Միաժամանակ, «ԱԼՄ»-ն ոչ մի անգամ չի անդրադարձել հեռուստադիտողներին հուզող մեկ այլ խնդրի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով» թեմային:

Սեպտեմբերին «Շանթ» հեռուստաընկերությունը դիտարկման թեմային անդրադարձել է միայն լրատվական «Հորիզոն» եւ «Հորիզոնի հավելված» ծրագրերում: Այստեղ գերակշռում էին տեղեկատվական եւ գովասանական նյութերը, ընդ որում թեմատիկ մի շարք բաժիններ կա՛մ ընդհանրապես չեն արժանացել լուսաբանման, կա՛մ դրանց հատկացվել է նվազագույն ուշադրություն: Հոկտեմբերին նաեւ «Հեռանկար» բանավեճային հաղորդումը որոշ հետաքրքրություն ցուցաբերեց թեմայի նկատմամբ (ինչը կարելի է բացատրել «Շանթի» ավանդական հետաքրքրության կենտրոնում գտնվող Գյումրիում սպասվող ընտրություններով): Սակայն այդ բանավեճային ծրագրում թեմայի բոլոր հիշատակումները այն թեմատիկ բաժինների շրջանակներում էին, որոնց վերագրվել է ընդհանուր բնույթ:

Հաշվի առնելով երեւանյան «Շանթ» հեռուստաալիքի սփռման գոտին՝ դիտարկման թեմայի նրա լուսաբանումը նպատակահարմար է համեմատել միայն մայրաքաղաքի բնակիչների հարցման հետ: Այսպես, երեւանցիների հետաքրքրությունների սանդղակում 5-րդ տեղում հայտնված թեման՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը», «Շանթ»-ի հետազոտված հաղորդումներում ակնհայտ առաջատար էր՝ ինչպես եթերային ժամանակով, այնպես էլ անդրադարձերի հաճախականությամբ: Երեւանցիների հա-

մար ամենաանախընտրելի՝ «Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում» բաժինը «Շանթ»-ում հայտնվել է երրորդ տեղում՝ երկու անգամ հաճախականությամբ և երեք անգամ եթերաժամանակով զիջելով «ընտրությունների գործընթաց» բաժնին: Երեւանցիների հետաքրքրությունների մեջ երկրորդ տեղը զբաղեցնող՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով» բաժինը երկու ամսվա ընթացքում ոչ մի անգամ «Շանթ»-ի լուսաբանմանը չի արժանացել: Մյուս թեմատիկ բաժինների նկատմամբ հեռուստաալիքի ուշադրությունը մեծմասամբ համապատասխանում էր լսարանի պահանջարկին:

«Շիրակ» հեռուստաալիքը, ինչպես նշվեց, լրատվական ծրագրեր չունի: Իսկ նրա բնավեճային հաղորդումները ճնշող մեծամասնությամբ ամբողջությամբ նվիրված էին դիտարկման թեմային: Ընդ որում, հոկտեմբերին այդ ալիքի բոլոր բնավեճային հաղորդումները ամբողջ ծավալով վերաբերվում էին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

Դիտարկման երկու ամսում «Շիրակը» ոչ մի անգամ չի լուսաբանել գյումրեցիներին ամենաշատը հուզող թեման՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով», իսկ հաջորդ չորս թեմաներին, որ ամենաշատն էին հետաքրքրում լսարանին, անդրադարձել է միայն մեկական անգամ՝ «Համայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում», «Համայնքում/տարածաշրջանում բնակարաններով ապահովում և այլ սոցիալական խնդիրների լուծում», «Համայնքում/տարածաշրջանում բարենորոգումների (ճանապարհներ, կոմունալ տնտեսություն, շինարարության որակ, հասարակական վայրերի մաքրություն և բարեկարգվածություն և այլն) խնդիրը», «Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում»: Հատուկ ընտրություններին նվիրված իր հաղորդումներում հեռուստաալիքն ամենաշատ ուշադրություն է հատկացրել այնպիսի թեմատիկ բաժինների, որոնք, սոցիոլոգիական հարցման արդյունքում, գյումրեցիները դասել են իրենց համար ամենաանկարելիոր խնդիրների շարքը՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը» և «Տեղական ինքնակառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր»: Չարմանալի չէ, որ համայնքի համար արդիական խնդիրների լուսաբանման որակով ՏԻՄ ընտրարշավի շրջանում հարցված գյումրեցիները նվազագույն չափով էին բավարարված հենց իրենց հանրային հեռարձակողից:

Գյումրիում հետազոտված մյուս երկու հեռուստաալիքներն ավանդական հետաքրքրություն են ցուցաբերել ընտրական գործընթացի նկատմամբ: «ԳԱԼԱ»-ն բավական մեծ ուշադրություն է հատկացրել «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը» ընդհանուր թեմատիկ բաժնին. այն կազմել է հեռուստատեսության կողմից դիտարկման թեմային նվիրված ընդհանուր եթերաժամանակի կեսից ավելին: «Ցայգ»-ում, ինչպես և «ԳԱԼԱ»-ում, «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը» ամենաշատ լուսաբանված բաժինն է: «Ցայգ»-ը կենտրոնացել էր մասնավոր թեմաների վրա, և, առաջին հերթին՝ «Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում» թեմատիկ բաժնի («Ընտրությունների գործընթացի» հետ այն կազմել է այն ամբողջ եթերաժամանակի կեսից ավելին, որ «Ցայգ»-ը նվիրել է դիտարկման թեմային): Ընդ որում, ե՛լ «ԳԱԼԱ»-ում, ե՛լ «Ցայգ»-ում «Համայնքում/տարածաշրջանում առողջապահության, կրթության, մշակույթի համակարգերի զարգացում» բաժինը առավելապես գովասանական լուսաբանում է ստացել: Մյուս թեմաների մեծ մասի լուսաբանմանը «ԳԱԼԱ»-ն ավելի քննադատաբար է մոտեցել, քան «Ցայգ»-ը:

«ԳԱԼԱ» և «Ցայգ» հեռուստաալիքների հաղորդումների բովանդակությունը մեծմասամբ համապատասխանում էր Գյումրիի լսարանի հետաքրքրություններին՝ հակառակ տեղական հանրային հեռարձակող «Շիրակի»: Ծիշտ է, հարցվածներին ամենից շատ հուզող՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով» թեմատիկ բաժնին «ԳԱԼԱ»-ն անդրադարձել է միայն միայն մեկ անգամ, իսկ «Ցայգ»-ը՝ ոչ մի: Ինչպես նշվեց, երկու ալիքն էլ առավելագույն ուշադրություն են հատկացրել «Տեղական ինքնակառավարման մարմինների

ընտրությունների գործընթացին», որը հարցված գյումրեցիները նշել են իրենց ամենաքիչը հետաքրքրող թեմաների երկրորդ տեղում: Մյուս բաժինների դեպքում Գյումրիի երկու մասնավոր հեռուստաալիքների հետաքրքրությունները հիմնականում համընկնում էին լսարանի պահանջմունքների հետ: Ընդ որում, ՏԻՄ ընտրությունների շրջանում համայնքի համար հրատապ խնդիրների լուսաբանման որակով հարցվողներն ավելի շատ բավարարված էին «ԳԱԼԱ»-ից:

Վանաձորում հեռուստաալիքների միջև ընդհանուր գծերն ավելի շատ էին, քան Գյումրիում: Մասնավորապես, ե՛լ «ՄԻԳ»-ը, ե՛լ «Լոռի»-ն մասնավոր թեմատիկ բաժիններին ավելի շատ են ուշադրություն դարձրել, քան ընդհանուր: Ծիշտ է՝ «Լոռի»-ն դիտարկման թեմայի նկատմամբ ակտիվացավ հոկտեմբերին, մինչդեռ դիտարկման երկու ամիսների ընթացքում «ՄԻԳ»-ն այն լուսաբանում էր ավելի համաչափ: Ինչպես նշվեց, Լոռու մարզի համար արդիական՝ բնապահպանական խնդիրը պատշաճ լուսաբանման չարժանացավ վանաձորյան հեռուստաալիքներում: «ՄԻԳ»-ը սահմանափակվեց մեկ անգամ անդրադառնալով «Համայնքում/տարածաշրջանում շրջակա միջավայրի պահպանության հարցերը: Համայնքում/տարածաշրջանում կանաչ տարածքների եւ ջրամբարների պահպանումն ու զարգացումը» թեմատիկ բաժնին՝ սեպտեմբեր ամսին: Ընդ որում, այդ անդրադարձն էլ զուտ լրատվական բնույթի էր: «Լոռի»-ն, հակառակը, սեպտեմբերին «լռություն էր պահպանում» եւ հոկտեմբերին չորս անգամ անդրադարձավ այդ բաժնին: Ընդ որում անդրադարձերից երեքը զուտ տեղեկատվական բնույթի էին, մեկը՝ պրոբլեմատիկ-քննադատական: Ընդհանուր առմամբ, սեպտեմբերին երկու հեռուստաալիքների եթերում գերակշռում էին դիտարկման թեմային տեղեկատվական բնույթի անդրադարձերը, բայց հոկտեմբերին «Լոռի»-ում կտրուկ աճեց գովասանական բնույթի նյութերի թիվը, որը ավելի քան երկու անգամ գերազանցեց պրոբլեմատիկ-քննադատականներին: Հոկտեմբերին որոշ չափով նաեւ կրճատվեց բանավեճային հաղորդումների ծավալը «ՄԻԳ»-ի եթերում, իսկ «Լոռի»-ում հակառակը՝ դրանք ավելի ակտիվորեն էին թողարկվում:

Լսարանի պահանջմունքների եւ դիտարկման թեմատիկ բաժինների նկատմամբ ուշադրության համապատասխանության առումով դարձյալ Վանաձորի երկու հեռուստաալիքներում շատ ընդհանրություններ դիտարկվեցին: Նրանք դրսևորել են մոտավորապես հավասար եւ բավարար հետաքրքրություն այն թեմատիկ բաժինների նկատմամբ, որոնք Վանաձորի հարցման մասնակիցներն իրենց համար ամենակարեւորն են համարել, բացառությամբ «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով» բաժնի, որին ոչ մի անգամ չեն անդրադարձել: Միաժամանակ, երկու ալիքն էլ բավական ուշադրություն են դարձրել «Տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենսդրություն, նորմատիվ ակտեր» բաժնին, որը վանաձորցիների համար նվազ հետաքրքիր է:

Ինչպես նշվեց, Կապանի «Սոսի» հեռուստաալիքը բավական հետեւողական եւ պրոբլեմային մոտեցում է ցուցաբերել դիտարկման թեմային: Այդ ալիքում բոլոր թեմատիկ բաժինների պրոբլեմատիկ-քննադատական լուսաբանումը գերազանցել է գովասանականին (բացի մեկից՝ «Սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը»): Ընդ որում, զուտ տեղեկատվական հիշատակումները մեծամասնություն են կազմել: Թեմատիկ բաժինների մեջ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացը» բաժնին արդյունքում աննշան առաջ է անցել «Համայնքում/տարածաշրջանում տնտեսության, փոքր ու միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում» թեմայից, որն առաջատար էր սեպտեմբերին: Հետագուոված մյուս հեռուստաընկերությունների համար ամենաքիչ հետաքրքրություն ներկայացրած՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով» բաժինը լուսաբանման չի արժանացել նաեւ «Սոսի»-ում, բայց մնացած բաժինները հեռուստաալիքի քիչ թե շատ ուշադրությանն արժանացել են: Այդ թվում՝ այնպիսի արդիական ընդհանուր թեմաների լուսաբանման հարցում, ինչպիսիք են «ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը» եւ «Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը», հեռուստաալիքը հետաքրքրություն է դրսևորել:

Կապանում սոցիոլոգիական հարցումն անելիս քաղաքացիների նախընտրությունները սահմանելը բավական դժվարին էր, որովհետև նույն թեմատիկ բաժիններն էին գրեթե հավասարապես նշվում եւ որպես կարելու, եւ որպես նվազագույն հետաքրքրություն հարուցող (սմանատիպ պատկեր է դիտարկվել նաեւ Երեւանի բնակիչների հարցման ժամանակ): Հետեւաբար սոցիոլոգիական հետազոտության եւ «Սոսի»-ի դիտարկման տվյալների համեմատությունը զգալիորեն պայմանական բնույթ ունի: Համեմայնդեպս, նշենք, որ «Սոսի»-ն միայն մեկ անգամ է անդրադարձել «Սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը», այն դեպքում, որ այդ թեման հայտնվել է կապանցիներին ամենից շատ հուզող խնդիրների հնգյակում: Իսկ «Սոսի»-ում որպես առաջատար արձանագրված՝ «Ընտրությունների գործընթացը» հարցվողները նշել են ամենաքիչ հետաքրքրող թեմաների շարքում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ դիտարկման խումբն արել է հետեւյալ հիմնական հետեւությունները.

1. Օրենսդրության անկատարությունը տեղական ինքնակառավարման ընտրությունների ընթացքում ակնառու դարձավ՝ ընտրարշավների լուսաբանման կարգավորման առումով: Ի տարբերություն համապետական ընտրությունների, ՏԻՄ ընտրությունների շրջանում քարոզչությունը օրենսդրորեն չի կարգավորվում, ինչը բազմաթիվ հավելյալ խնդիրներ է առաջացնում՝ թեկնածուների համար ՉԼՄ-ների հավասարապես հասանելիության, քարոզչական եւ խմբագրական նյութերի տարանջատման եւ այլ ուղղություններով: Թեեւ նշված խնդիրները տվյալ դիտարկման առարկա չեն եղել, դրանք անուղակիորեն ազդել են ՉԼՄ-ների կողմից համայնքների/տարածաշրջանների հրատապ խնդիրների նկատմամբ անբավարար ուշադրության, ընտրողների հոգսերի նկատմամբ անհրաժեշտ հետաքրքրության պակասի վրա: Օրենսդրության բացերը լրացնելու հրամայականն է՛լ ավելի է աճում՝ կապված առաջիկայում՝ Երեւանի ավագանու եւ քաղաքապետի ընտրությունների հետ: Անկասկած, այս ընտրությունները համերկրային եւ մայրաքաղաքային ՉԼՄ-ների ուշադրության կենտրոնում են լինելու, եւ օրենսդրական անհրաժեշտ կարգավորման բացակայությունը լուրջ խոչընդոտ կդառնա՝ ընտրությունները ժողովրդավարական չափանիշներին համապատասխան անցկացնելու ճանապարհին:

2. Ընդհանուր առմամբ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանում հետազոտված ՉԼՄ-ները քիչ ուշադրություն են հատկացրել համայնքների/շրջանների հրատապ խնդիրներին: Ընտրարշավը բավարար չափով առիթ չդարձավ բնակչության հանապազօրյա հոգսերի բարձրաձայնման, քննարկման եւ հետագա լուծման համար:

3. Հեռարձակվող ՉԼՄ-ները չեն նպաստել ՏԻՄ ընտրությունների վերափոխմանը քաղաքական գործընթացի: Այդ խնդրի նկատմամբ ուշադրության բացակայությունը դժվար է բացատրել, հատկապես, եթե նկատի ունենանք, որ մոտ ապագայում քաղաքական կուսակցություններն առաջին անգամ հնարավորություն կստանան ուղղակիորեն մասնակցել (թեկնածուներ առաջադրել) ՏԻՄ ընտրություններին: Ավելին, Երեւանի ավագանու ընտրությունները առաջին են Հայաստանի Հանրապետության պատմության մեջ, երբ կիրառվելու է հարյուրտոկոսանոց համամասնական ընտրակարգ: Փաստորեն, չնայած իրականացվող արմատական օրենսդրական վերափոխումներին, ՏԻՄ ընտրությունները շարունակում են դիտարկվել (այդ թվում՝ ՉԼՄ-ների կողմից) հիմնականում ոչ թե որպես քաղաքական գործընթաց, այլ որպես ընտրարշավ, որում առանցքային դեր են խաղում ազգակցական, հարեւանական, անձնական-խմբային կապերը: Ուստի, ուշադրության կենտրոնում ոչ թե թեկնածուների ծրագրերն են հայտնվում, այլ նրանց անձը: 2008-ի աշնան ՏԻՄ ընտրություններում այդ իրողությունը մասամբ պայմանավորված էր նաեւ այդ մակարդակի ընտրությունների նկատմամբ քաղաքական ուժերի մեծ մասի պասիվ վերաբերմունքով:

4. ՏԻՄ ընտրությունների (ինչպես եւ այլ մակարդակի ընտրությունների) ոչ բավարար արդյունավետ լուսաբանման պատճառներից մեկը այդ հարցում հստակ խմբագրական քաղաքականության բացակայությունն է ՉԼՄ-ներում: Նման քաղաքականության առկայությունը կնպաստեր առավել առարկայական, բովանդակային ընտրարշավի, թեկնածուների ծրագրերի մրցակցայնության:

5. Հանրային հեռարձակողներն ընտրությունների հետ կապված արդիական թեմաներին է՛լ ավելի նվազ ուշադրություն են հատկացրել, քան մնացած հետազոտված հեռուստաընկե-

րությունները: Մի քանի խնդիրներ, որոնք հատուկ կարեւորություն էին ստանում հենց ՏԻՄ ընտրությունների համատեքստում՝ միաժամանակ ազգային նշանակություն ունենալով, ընդհանրապես չեն արժանացել 31-ի եւ «Շիրակ»-ի ուշադրությանը: Դիտարկման թեմային գովասանական անդրադարձերի մեծ քանակը վկայում է գոյություն ունեցող խնդիրների նկատմամբ՝ Հանրային հեռուստաընկերության ոչ քննադատական վերաբերմունքի մասին:

6. Այն, որ համերկրային եւ մայրաքաղաքային հեռուստաալիքները նվազ հաճախականությամբ եւ ծավալով են անդրադարձել դիտարկման թեմային, կարելի է օրինաչափ համարել: Միաժամանակ, նրանցից արժեր ակնկալել ավելի մեծ հետաքրքրություն՝ «բարդ» թեմաների նկատմամբ, որոնք պրոֆեսիոնալ, խորացված մոտեցում էին պահանջում: Սակայն այստեղ էլ՝ ընտրությունների եւ դրանց հետ կապված խնդիրների լուսաբանման հարցում, նրանք զիջել են մարզային հեռուստաընկերություններին, ինչը վկայում է բնակչության առօրյա հոգսերի նկատմամբ նվազ հետաքրքրության մասին:

7. Օրինաչափ է նաեւ դիտարկման թեմայի նկատմամբ այն հեռուստաընկերությունների ավելի մեծ հետաքրքրությունը, որոնք ավելի փոքր (բնակչության թվով) տարածքում են սփռվում: Միայն ողջունել կարելի է նրանց ձգտումը (ի տարբերություն համերկրայինների, մասնավորապես՝ հանրային հեռարձակողի, եւ՝ չնայած անհամեմատ ավելի քիչ ռեսուրսների եւ հնարավորությունների)՝ լուսաբանել հարցերի հնարավորինս ավելի լայն շրջանակ, ավելի շատ ապահովել տեղեկատվական եւ պրոբլեմատիկ-քննադատական լուսաբանում: Միաժամանակ, այդ երեւույթի պատճառներն այնքան էլ ակնառու չեն եւ հետագա վերլուծության կարիք ունեն, մասնավորապես՝ հաշվի առնելով հակառակ գործընթացները մայրաքաղաքային հեռուստալրագրության մեջ:

8. Հեռուստալսարանի պահանջարկի եւ հեռուստատեսության առաջարկի միջեւ մեծ տարբերությունը, որ արտահայտվել է «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների բնակիչների շահերի պաշտպանություն համապետական մակարդակով (ներդրումների ներգրավում, տարածաշրջանային զարգացման ծրագրերի ստեղծում/ընդգրկում եւ այլն)» թեմատիկ բաժնում, վկայում է, որ հեռուստաալիքների մեծ մասը քիչ են հաշվի առել սպառողի հետաքրքրությունը՝ իրենց տեղեկատվական արտադրանքի նկատմամբ: Բացի այդ, նշված թեմայի պասիվ լուսաբանումը վկայում է ինչպես Հայաստանում ՏԻՄ կայացման խնդիրների, այնպես էլ այդ գործընթացում ՉԼՄ-ների դերի ոչ բավարար արդյունավետության մասին:

9. «ՏԻՄ ընտրություններին քաղաքական կուսակցությունների եւ հայտնի քաղաքական գործիչների, հասարակական դեմքերի մասնակցության խնդիրը» եւ հատկապես «Բիզնեսի եւ տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական վարչակազմերի սերտաճման խնդիրը» թեմատիկ բաժինների նկատմամբ ինչպես ՉԼՄ-ների, այնպես էլ նրանց լսարանի հետաքրքրության ցածր մակարդակն արտացոլում է երկրում քաղաքական, վարչարարական համակարգերի բարելավմանը խոչընդոտող խորքային խնդիրների՝ հանրային թույլ ընկալման մասին:

10. «Համայնքում/տարածաշրջանում շրջակա միջավայրի պահպանության հարցերը: Համայնքում/տարածաշրջանում կանաչ տարածքների եւ ջրամբարների պահպանումն ու զարգացումը» եւ «Համայնքում/տարածաշրջանում սոցիալական ենթակառուցվածքների (զբոսայգիներ, մարզական եւ մանկական խաղահրապարակներ, բակեր եւ այլն) զարգացումը» բաժիններին հատկացված փոքր ուշադրությունը վկայում է այսօրեական խնդիրների շուրջ կենտրոնանալու եւ ավելի տեւական հեռանկարում կյանքի որակը կանխորոշող գործոնների նկատմամբ հարաբերական անտարբերության մասին: Իրավիճակի փոփոխությունը, բնականաբար, նախելառաջ պայմանավորված է սոցիալ-տնտեսական պայմանների ընդհանուր բարելավմամբ, ինչին կարող էր նպաստել նաեւ ՉԼՄ-ների առավել պրոակտիվ աշխատանքը:

11. Հայկական հեռուստաընկերություններում հասարակական-քաղաքական նշանակություն ունեցող խնդիրների լուսաբանման վրա զգալիորեն ազդում է միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությունը համապատասխան հաղորդաշարերի թողարկմանը: Այդ փաստն առաջարկում է ոչ միայն հայկական հեռուստատեսության աշխատանքի գնահատական, այլեւ հասարակական նշանակության թեմաների լուսաբանման խնդրի լուծման հնարավոր տարբերակ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դիտարկման խնդիրը՝ քանակական տվյալների վերլուծության միջոցով բացահայտել եւ սահմանել

- Հայաստանի հեռարձակող ՉԼՄ-ների՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նկատմամբ ուշադրության աստիճանը,

- Հայաստանի հեռարձակող ՉԼՄ-ների՝ համայնքների/տարածաշրջանների արդիական խնդիրների նկատմամբ ուշադրության աստիճանը:

2. Դիտարկման ժամանակաշրջանը՝ 2008թ. սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 31-ը:

3. Դիտարկումն ընդգրկել է 11 ՉԼՄ.

4 համերկրային հեռուստաընկերություն՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության Ա-ռաջին ալիք, Հայկական երկրորդ հեռուստաալիք, «ԱԼՄ», «Արմենիա»,

1 մայրաքաղաքային հեռուստաընկերություն՝ «Շանթ»,

Գյումրիի (Շիրակի մարզ) 3 հեռուստաընկերություն՝ «Շիրակ» հանրային հեռուստաալիք, «Ցայգ» (28-րդ դեցիմետրային հաճախականություն), «ԳԱԼԱ»,

Վանաձորի (Լոռու մարզ) 2 հեռուստաընկերություն՝ «Լոռի», «ՄԻԳ»,

Կապանի (Սյունիքի մարզ) 1 հեռուստաընկերություն՝ «Սոսի»:

4. Դիտարկման առարկան՝ վերոհիշյալ հեռուստաալիքների լրատվական/լրատվավերլուծական ծրագրերի հիմնական թողարկումները եւ բանավեճային հաղորդումները:

5. Հատուկ հետազոտության առարկան՝ այն բոլոր հեռուստանյութերը, որոնք շոշափում են Հայաստանի համայնքների/տարածաշրջանների արդիական խնդիրներ, ինչպես նաեւ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները (ընտրարշավ, ընտրությունների ընթացքը եւ այլն):

II. ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստանյութն է:**

Հեռուստանյութ ասելով հասկանում ենք.

Եթերի թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝
ա. լրատվական ծրագրի առանձին սյուժեն,
բ. հաղորդավարական տեքստով ներկայացված առանձին տեղեկությունը,
գ. թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ (միջարկում, բլյում եւ այլն) հաղորդումից առանձնացող մասը (բաժին, սյուժե), որը շոշափում է տարբեր թեմաներ/խնդիրներ,

դ. սյուժեների ծանուցումները (անոնսները) դիտարկվում են իբրև այն նյութի մաս, որին վերաբերվում են,
ե. հեռուստասյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվում է իբրև այդ սյուժեի (ռեպորտաժին եւ այլն) մաս:

2. Լրատվական ծրագրի/բանավեճային հաղորդման հեռուստանյութերի ընդհանուր քանակի եւ ծավալի հաշվարկը.

Ա. Դիտարկողներն ամեն օր հաշվառում են արձանագրում են լրատվական, լրատվավերլուծական ծրագրերի, բանավեճային հաղորդումների յուրաքանչյուր թողարկման հեռուստանյութերի քանակը, **բացի** եղանակի տեսությունից, առևտրային/քաղաքական գովազդից եւ հայտարարություններից, հեռուստահաղորդումների ծանուցումից:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվում է *միավորներով*:

Բ. Դիտարկողները չափում են արձանագրում են հեռուստաալիքի լրատվական, լրատվավերլուծական ծրագրերի, բանավեճային հաղորդումների յուրաքանչյուր թողարկման հեռուստանյութերի (եթերային ժամանակի) ծավալը, **բացի** եղանակի տեսությունից, առևտրային/քաղաքական գովազդից եւ հայտարարություններից, հեռուստահաղորդումների ծանուցումից:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվում է *վայրկյաններով*:

3. Լրատվական ծրագրի/բանավեճային հաղորդման՝ դիտարկման առարկային նվիրված հեռուստանյութերի ընդհանուր քանակի հաշվարկը.

